ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ

Հայագետներն ու արևելագետները հայկական ցեղերին հիմնականում անդրադարձել են հայ ժողովրդի կազմավորման համատեքստում[1]*: Նրանց առաջադրած տեսություններում պարզաբանված են շատ կարևոր հարցեր, բայց ցեղերի հարցը շարունակում է մնալ հայ ժողովրդի պատմության լուսաբանման անհրաժեշտություն ունեցող էջերից մեկը: Մանավանդ, որ առանց ցեղային կառուցվածքի բացահայտման, ուղղակի անհնար է որևէ ժողովրդի պատմության նախնական փուլերի մասին լուրջ ու հիմնավոր պատկերացում կազմել:*

Համարյա բոլոր ժողովուրդներն իրենց պատմության նախնական շրջանում, որպես օրինաչափություն, բավականին տևական, դարեր ընդգրկող ժամանակով գտնվել, իսկ որոշ դեպքերում դեռևս գտնվում են ցեղային վիճակում: Սա մի գոյավիճակ է, որ սեփական լեզվով զատված և իր պատմական կենսատարածքում հաստատված, այսինքն գործնականում կազմավորված ժողովուրդը կարող է գտնվել երկար դարեր, իսկ որոշ դեպքերում իր ողջ գոյության ընթացքում: Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ ցեղային շրջանը այստեղ չի գիտվում ժողովրդի կազմավորման շրջան:

* * *

Լեզվաբանական տվյալների համաձայն, մ.թ.ա. III հազարամյակում արդեն գոյություն ուներ հայոց լեզու[2]*: Բայց մինչ վաղ ժամանակներին անցնելը, անհրաժեշտ են հայկական ցեղերին վերաբերող գուցե ավելի ուշ*

---

1 Ն. Ադոնց. Հայաստանը Հուստինիանոսի ժամանակներում. Երևան, 1987, էջ 439-444 [ռուսերեն հրատարակության (Ս. Պետերբուրգ, 1908) թարգմանություն]: Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Ա, գլուխ II. Արմենների ներդաղթի ուղիները և նրանց հնագույն գաղթավայրերը. Երևան, 1945, էջ 24–34: Б. Пиотровский. О происхождении армянского народа. Ереван, 1946; Г. Капанцян. Хайаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван 1947. *Ս. Երեմյան. Հայերի ցեղային միությունը Արմեշուպրիա երկրում.– «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1958, N3, նույնի՝ Հայկական առաջին պետական կազմավորումները.– ՊԲՀ, 1968, N3,* И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968. *Գ. Սարգսյան. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմության և զարդացման փուլերի խնդիրը).– ՊԲՀ, 1992, №2–3: Վ. Խաչատրյան. Հայաստանը մ.թ.ա. XV–VII դարերում. Երևան, 1988: Ռ. Իշխանյան. Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր. Երևան, 1988: Ա. Հոսյան. Տուն Թորդոմայ. Երևան, 1998: Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ). հ. 1, Երևան, 1971, էջ 189–196, 237–245, 423–443: XIX–XX դդ. սահմանագծում շրջանառվող, Ք. Պատկանյանի, Պ. Կրեչմերի, Ն. Մառի և այլ հետազոտողների տեսակետների մասին տե՛ս Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 32–34: Լեո. Երկերի ժողովածու. Երևան, 1966, էջ 247–248, 257–262:*

2 Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1987, էջ 24–25, 29:

և ոչ ժամանակագրական, բայց համեմատաբար ուղղակի տվյալներ, որոնք կարող են ուղեցույց կամ վերծանման բանալի հանդիսանալ հին աղբյուրներում առկա մեզ անհրաժեշտ հաղորդագրությունը ճիշտ հասկանալու ու գնահատելու համար: Այս ակնկալիքը մեզ կանգնեցնում է միջնադարյան աղբյուրներում պահպանված հայ ժողովրդի ծագումնաբանական ավանդությունը վերլուծելու ու վերծանելու խնդրի առաջ:

Անկախ նրանից, թե ավանդական ծագումնաբանությունները որքանով են համապատասխանում պատմական իրողությանը, նախ և առաջ կարևոր են նրանով, որ դրանցում ուղղակիորեն խոսվում է տվյալ ազգի ցեղերի, դրանց տեղակայության, անվանումների, միջցեղային փոխհարաբերությունների և այլ տվյալների մասին: Այս կարգի ավանդությունները թելադրված են էթնիկ ծագումնաբանության ընկալման միևնույն սկզբունքով, ինչից հետևում է դրանց նույնասյուժետ սցենարը: Այդ սկզբունքը էթնիկ խմբավորումների, ազգերի, ցեղերի մեկ արմատից մեկ նախահորից ծագելու պատկերացումն է:

Աստվածաշնչում մարդկային ցեղի առաջին նահապետներն ու նրանցից սերված էթնիկ նախահայրերը ուղղակիորեն գիտվում են որպես տարբեր էթնոմիավորումների, ազգերի, ցեղերի մարմնավորողներ[3]: Ազգաբանության նույն ընկալումով է կազմված Հին Կտակարանի շնորհիվ լավ պահպանված հրեական ծագումնաբանությունը, որը լինելով շատ ավելի հանգամանալից, կարևոր է մյուս ավանդությունները վերծանելու հարցում:

Սեմից սերված էթնիկ ենթախմբերից մեկն է Արփաքսադը, որից ծագած ժողովուրդներից են հրեաները: Սրանց անվանագիր նախահայր Հակոբ-Իսրայելի 12 որդիներն ու թոռները մարմնավորում են հրեական համանուն 12 ցեղերը: Դրանցից ամեն մեկն ունի իր տիրապետության սահմանները, առանձին զորամիավորումներն ու նույնիսկ դրոշները և ուղղակիորեն որպես ցեղ են ներկայացված ու կոչված: Քանաանի հյուսիսային կեսը բնակեցնող 10 ցեղերը կազմել են առանձին ցեղային միավորում, որի հիմքի վրա առաջանում է Իսրայելի թագավորությունը: Այն կոչվել է նաև այս միավորումը գլխավորող ցեղ-նախահայր Եփրեմի անունով:

Երկրորդ միավորումը կազմել են երկրի հարավային կեսը բնակեցնող 3 այլ ցեղեր, որոնց կազմած թագավորությունը կոչվել է այն գլխավորող ցեղ-նախահայր Հուդայի անունով: Այս 2 ցեղամիավորումներից ամեն մեկն ունի իր ուրույն գիցարանը և առանձին պաշտամունքային և քաղաքական կենտրոնը: Հրեական ցեղերի, ցեղամիավորումների կամ դրանք ներկայացնող թագավորությունների միջև ընթանում է չընդհատվող, անհաշտ, դաժան պայքար: Նրանք մերթ միավորվում են մեկ պետության մեջ, մեկ պառակտվում հակամարտ կողմերի[4]:

Էթնիկ ծագումնաբանությունը նույն կերպ է պատկերացվում նաև այլ աղբյուրներում: Դրանց մեծ մասը ծագում են շատ ավելի վաղ ժամանակ-

---

3 Աստվածաշունչ (Կոստանդնուպոլիս, 1896, վերահրատարակված. Շտուտգարդ, 1990). Ծննդոց, Ժ, էջ 10–11:

4 Ծննդոց, ԺԱ, էջ 11–12, ԻԱ, էջ 21–22, ԻԵ, էջ 27–28, ԼԵ, էջ 42–43, ԽԶ, էջ 57–58: Թուոց Բ, ԼԲ-ԼԴ, էջ 159–160, 203–208, Յեսու, ԺԳ-ԻԴ, էջ 274–290, Դատաւորաց Ի, էջ 319–321, Ա Թագաւորաց, Ժ, ԺԱ, էջ 338–341, Բ Թագաւորաց, ԲԵ, էջ 371–376, Եսայիա ԺԱ 13, էջ 797, Եզեկիէլ, ԼԷ 16, էջ 980:

ներից և զերծ են Հին Կտակարանի ազդեցությունից: Հին հույն հեղինակները Հին Կտակարանը, դրան կրկնող հունա-հռոմեական և հայ միջնադարյան աղբյուրները ներկայացնում են հունական ծագումնաբանությունը: Դրանցում առկա է նույն մոտեցումը հույների նախահայրը, նրա որդիներն ու մյուս սերունդները գիտված են որպես էթնիկական միավորի ու դրանից ծագող ցեղերի մարմնավորողներ[5]:

Նույն կերպ է պատկերացվում ծագումնաբանությունը սկյութական, վրացական, աֆղանական և այլ ավանդություններում[6]: Դրանցում նույնպես էթնիկ նախահայրերն ու նրանց որդիները, թոռներն ու մոտակա սերունդները մարմնավորում են ազգեր ու ցեղեր: Նույն սկզբունքից բխող ընդհանուր ընկալումն է առկա նաև էթնոխմբավորումների կամ ցեղամիավորումների գոյացման, դրանց անվանումների և այլ հարցերում:

Ներկայացված ծագումնաբանական ավանդությունները, որքան էլ առասպելացված լինեն, արտահայտում են դրանց ստեղծման ժամանակներում առկա պատմական իրողությունը և ըստ էության հանդիսանում տվյալ ժողովրդի ծագման ավանդույթային պատմությունը: Դրանցում ներկայացված էթնոաշխարհագրական իրավիճակը նման ձևով առկա է եղել հետագա ժամանակներում և ինչ-որ չափով պահպանվել մինչ օրս: Սա հիմք է տալիս լրջորեն վերաբերվել այս կարգի աղբյուրներին, որոնց պատմական արժեքը անգնահատելի է, քանի որ դրանք հաճախ վերաբերում են հեռավոր, անհիշատակ ժամանակների:

* * *

Ներկայացված ավանդությունների հետ համադրումից ակնհայտ է, որ հայոց ծագումնաբանությունում[7] նույնպես, հայոց նախահայր Հայկ նահապետի իրենց տիրապետության ստույգ սահմաններն ունեցող սերունդները՝ Արամանյակը, Փառոխը, Ցոլակը, Շարան, Գեղամը, Գառնիկը, Սիսակը, Խոռը, Բալը, Մանավազը և Կադմոսը, մարմնավորում են Արագածոտ-

---

5 Հերոդոտոս. Պատմություն, I, 56, VII, 14, VIII, 44. Երևան, 1986, էջ 24, 414, 473 (հին հունական մեջբերված աղբյուրների ամբողջական կամ հատվածաբար թարգմանությունները ըստ Ս. Կրկյաշարյանի): Аполлодор. Мифологическая библиотека, Л., 1972. Հովսեպոս Փլավիոս. Հրեական հնախոսություն. գիրք I.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (այսուհետև՝ ՕԱՀՀՄ). հ. 9, Հին հունական աղբյուրներ. հ. Ա, Երևան, 1976, էջ 55–56: Հիպոլիտոս. Քրոնիկոն (այս աշխատությունը միջնադարում թարգմանվել է հայերեն և հայտնի է «VII դարի Անանուն ժամանակագրություն» անունով: Այստեղ օգտագործված է 1904 թ. Վենետիկում հրատարակված օրինակը, որը համեմատված է «Քրոնիկոնի» լատիներեն թարգմանությունների հետ, գրանցում առկա ոչ էական տարբերություններով հանդերձ): Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Ադուանից աշխարհի. գիրք I, գլուխ Բ. Երևան, 1983, էջ 4: Հովհաննես Դրասխանակերտցի. Հայոց Պատմություն. Երևան, 1996, էջ 14: Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը.– Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., կազմող Վ. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 301:

6 Հերոդոտոս, IV, 5–9, էջ 223–225: Դիոդորոս Սիկիլացի. Պատմական գրադարան, II 43(1-7).– ՕԱՀՀՄ. հ. 14: Հին հունական աղբյուրներ. հ. Բ, Երևան, 1985, էջ 44–45: Վ. Ոսկանյան. Փաշտունական զալջի ցեղամիավորումը, նույնի՝ Փաշտուններ (Աֆղաններ).– «Իրան-Նամե»,1994, №1, 1996 №2–3:

7 Մովսես Խորենացի. Հայոց Պատմություն, I, Զ, Ժ, ԺԲ, Երևան, 1981, էջ, 30, 40, 46, 52, 126: Սեբէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն. Ա. Երևան, 1939, էջ 4: Այստեղ հիշատակված են միայն ընդարձակ տիրություններ բնակեցնող, այդպիսով ցեղերի հետ նույնացող նահապետները: Այդ պատճառով երկրամասեր բնակեցնելու հետ անմիջականորեն չառնչվող Արամայիսը, Ամասիան և Հարման բացակայում են:

նում, Մասյացոտնում, Շիրակում, Սյունիքում, Վանա լճի ավազանում, Կորդուքում տարածված հայկական ցեղերին»: Խորենացու և Սեբեոսի հետևյալ ընորոշումները ենթադրել են տալիս, որ նրանք Հայկին ուղղակիորեն համարել են հայկական ցեղերի («ազգացն») նախահայր. «Այս Հայկ որդի Թորգոմայ..., նախնի Հայաստանեայց և այս ազգք նորա և ծնունդք և աշխարհ բնակության նոցա», «Հայկ անուն, նահապետ ազգացն»: Խորենացին նույն տեսանկյունով է դիտում նաև Հայկի սերունդներից ծագած նախարարական տները. «Սիսականդ ազգ», «զցեղս զայս մեծ և անվանի (զԱռան)», «ի ցեղից տանց նահապետութեանց», «մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց»:

Ինչպես հրեական ավանդությունում, հայոց ծագումնաբանությունում հստակորեն արտահայտված են ոչ միայն հայկական ցեղերը, այլև դրանցով կազմավորված ցեղային խմբավորումները, ընդ որում շատ ավելի ընդգծված ձևով: Մի ցեղատարածքային միավոր են կազմում Վանա լճի հյուսիսարևմտյան ավազանում և մերձակա շրջաններում հաստատված նահապետ ցեղերը: Հայկն իր մոտ՝ Հարքում է թողնում Խոռին, Բազին և Մանավազին, նրանց ժառանգություն տալով Խոռխոռունիքը, Բզնունիքը և Հարքը: Նախահոր գլխավոր գործունեությունը՝ Բելի դեմ հաղթանակը տեղի է ունենում Հայոց ձորում: Այսինքն Հայկի և նրա հետ մնացած նահապետ-ցեղերի բնակության ու գործունեության արեալը ընդգրկում է Վանա լճի ողջ ավազանը: Բացի այդ «ինքնակամ հնազանդեալ դիւցազինն», այսինքն Հայկին նաև Սեմից ծագեցվող, Տարոնը ներկայացնող Տարբան նահապետ-ցեղը: Այսպիսով, Հայկը Կորդուքը Կագմոսին ժառանգելով, ուղղակիորեն առնչվում է միայն Վանա լճի ավազանի ընակեցմանը: Խորենացու համաձայն, Արամանյակը առանց Հայկի է շարժվում հյուսիս-արևելք, իսկ ըստ Սեբեոսի Հայկը միայն հոգին ավանդելիս է ավագ որդուն հրամայում «երթալ ի հիւսիսակողմն»:

Մյուս ցեղատարածքային միավորը կազմում են Հայկի ավագ որդի Արամանյակը և նրանից անմիջապես ծագող նահապետ-ցեղերը՝ Շարան, Փառոիը, Ցոլակը, Գառնիկը, Գեղամը և Սիսակը: Արամանյակը հաստատվում է Վանա լճի ավազանը հյուսիսից սահմանազատող հզոր լեռնաշղթայից՝ Հայկական Պարից հյուսիս, Արաքս գետի ձախափնյա ավազանում Արագածոտնում: Նրա սերունդները այս կենտրոնից բազմանալով, հաստատվում են Շիրակում, Մասյացոտնում, Կոտայքում, Գեղարքունիքում և Սյունիքում:

Հայոց ավանդությունում առանձնանում է նաև երրորդ ցեղատարածքային միավորը: Հայկ նահապետը Կորգուքը «տուն բնակութեան» էր թողել ավագ թոռանը՝ Կագմոսին և նրա երկու որդի-ցեղերին, ինչից հետո միայն երկար ճանապարհ անցնելով՝ հաստատվել Վանա լճի ավազանում:

Այսպիսով, հայոց ծագումնաբանական ավանդությունում ակնհայտորեն առանձնանում են 3 ցեղատարածքային միավորումներ (տե՛ս քարտեզ 1): Մեկը Վանա լճի ավազանում հաստատված ցեղամիավորումն է, որում

---

8 Որոշ հայագետներ նույնպես հանձինս Հայկ նահապետի սերունդների, տեսնում են հայկական ցեղերին: Տե՛ս Գ. Ժ ա մ կ ո չ յ ա ն. Հայ ժողովրդի պատմություն. Երևան, 1975, էջ 67: Մ. Կ ա տ վ ա լ յ ա ն. Հայկ.– Հայկական սովետական հանրագիտարան. հ. 6, Երևան, 1980, էջ 166:

ընդգրկված նահապետ-ցեղերից ավագը Հայկն է: Մյուսը՝ Արարատյան դաշտավայրը, Շիրակը, Սևանի ավազանը և Սյունիքը բնակեցրած ցեղամիավորումն է, որում ընդգրկված նահապետ-ցեղերից ավագը Արամանյակն է, և երրորդը՝ Կորդուքում հաստատված ցեղամիավորումն է՝ Կադմոս նահապետ-ցեղի ավագությամբ:

Ցեղատարածքային այս միավորները շատ ընդգծված են արտահայտված հայոց ծագումնաբանությունում և այն վաղուց է նկատվել հայագետների կողմից: Հ. Մանանդյանը Հայկի, Արամանյակի, Կադմոսի ու նրանց սերունդների բնակության երեք շրջանները համարում է «հայ ժողովրդի նախահայրերի հնագույն գաղթավայրեր», իսկ Գ. Սարգսյանը՝ «Հայկի և նրա սերունդների տեղաշարժի» երեք ուղղություններ[9]:

Հայկական ցեղային եռյակը ակնհայտ է նաև դրանց զբաղեցրած նախնական տարածքներից, որոնք միմյանց հետ չունեն ընդհանուր սահմաններ և Հայկական լեռնաշխարհում տեղակայված են առանձնացած կղզիների ձևով: Դրանք հետագա աստիճանական ընդարձակմամբ են միայն սահմանակցում միմյանց, ինչին նույնպես հնարավոր է հետևել հայոց ծագումնաբանության, հատկապես այն ամփոփող Խորենացու Մար Աբասյան աղբյուրի տվյալներով: Պատմահոր Բ գրքում ներկայացված նահապետ-ցեղերի հետագա ճյուղագրությունում, հայկյան ճյուղի համարյա բոլոր ներկայացուցիչները ներկայացված են որպես «ի զավակացն Հայկայ». «այլ և զնախարարութիւն Ապահունեաց և զՄանավազյան և զԲզնունական ի նոյն զավակացն Հայկայ», «ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ», «զՈրդունին անուանեալ, որ ի զավակացն Հայկայ», «ի զավակե Պասքամայ, ի Հայկայ թոռնե, Տորք», «ի Նոյն ազգե (ի Հայկայ) ...նահապետ նոցա զՀայր»[10]: Այստեղ, բացի Վանա լճի արևելյան ավազանին տիրող Խոռ, Բազ և Մանավազ նախնական նահապետ-ցեղերի, Հայկից ծագած են համարվում նաև Բասենին տիրող Որդունիները, Անդեղ տանը տիրող Պասքամյան Տորքը, Հարքից արևելք իշխող Ապահունիները և «յԱրարատականէ մինչև ցՃուաշ և ցՆախճավան» տիրող Հայրը:

Արամանյակյան ցեղամիավորումից ճյուղավորված նահապետ-ցեղերը ներկայացված են ոչ թե անմիջապես Արամանյակից, այլ նրա ճյուղի որևէ ներկայացուցչից սերված, ինչը հավանաբար արտահայտում է այս խմբավորման ցեղերի համախմբվածությունը իրենց ծագումը գլխավոր նախահոր հետ կապող հայկյան ճյուղի ցեղերի համեմատությամբ. «զԴատ ի զավակե Գառնկայ, որ ի Գեղամայ», «իսկ Գուշարայ, որ յորդոցն Շարայի», «զտէրութիւնն Աշոցայ, և զսեպհականութիւնն Տաշրաց ... ի զավակացն Գուշարայ», «զԱռան ... որ ի Սիսակայ: Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդեացւոց և Գարգարացւոց», «իսկ զՌշտունիս և զԳողթնեցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարև հատուած»[11]: Ակնհայտ է, որ բացի Արագածոտնին, Մասյացոտնին, Կոտայքին, Շիրակին, Գեղարքունիքին ու Սյունիքին տիրող, Ա գրքում ներկայացված նախնական նահապետ-ցեղերի, արամանյակյան ճյուղից են

9 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 28–30: Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Մովսես Խորենացու..., էջ 27–50:
10 Խ ո ր ե ն ա ց ի, II, Է, Ը, էջ 124–130:
11 Նույն տեղում, էջ 124–132:

Քարտեզ I. ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԵՐԸ ԵՎ ՑԵՂԱՅԻՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ. Մ.Թ.Ա III-I ՀԱԶԱՐԱՄՅԱԿ



ծագեցվում նաև Գուդարքին, Տաշիրքին ու Աշոցքին տիրող Գուշարյանները, Վարաժնունիքին տիրող Դատը, Արցախ-Ուտիքին տիրող Առանը: Այսինքն այս ցեղամիավորման տիրույթն ընդարձակվելով՝ ընդգրկել է ողջ Կուր-Արաքսյան միջնատարածքը: Միակ անհամապատասխանությունը հանդիսանում են Ռշտունիները, որոնք թեև ծագեցվում են արամանյակյան ճյուղից, բայց նրանց տիրույթը գտնվում է Հայկյան միավորման բաժնի խորքում: Սա գուցե չփոթմունքի արդյունք է, թեև չի բացառվում, որ արամանյակյան ճյուղից ծագող որևէ ցեղ կարող էր տեղաշարժվել ու բնակվել հայկյան տիրույթներում:

Նախնական տարածքներից Կադմոսյան ցեղի հետագա սփոման ուղիները հայոց ավանդությունում հստակ չեն արտահայտված: Հավանաբար Կորդուքից հյուսիս բնակվող մոկացիները, անձևացիներն ու ակեացիները ծագում են այս ցեղատարածքից, քանի որ հիշատակվում են կորդվացիների հետ նույն խմբում: Առաջիկա տվյալներից հետևում է, որ այս ցեղամիավորումը տարածվել է նաև այլ ուղղություններով:

Այսպիսով, հայոց ծագումնաբանությունում ներկայացված են հայկական մոտ 15 ցեղեր և գրանցից կազմավորված երեք ցեղատարածքային միավորումներ: Հայկական լեռնաշխարհի համարյա ողջ հյուսիսային կեսը զբաղեցրել է Արամանյակյան, իսկ հարավային կեսը՝ Հայկյան ցեղամիավորումը: Կադմոսյանները զբաղեցրել են ծայր հարավային, հիմնականում Կորդուքը ընդգրկող երկրամասերը: Հենց այս երեք ցեղամիավորումներն են, որ ինչպես ակնհայտ կդառնա առաջիկա տվյալներից, հնում ներկայացրել ու թելադրել են Հայկական լեռնաշխարհի քաղաքականությունը: Այստեղ առաջնային է հատկապես հայկական 3 հիմնական ցեղամիավորումների բացահայտումը, քանի որ հենց դա է հանդիսանում այն գլխավոր տվյալը, որով հնարավոր է դառնում մեկնաբանել հայ ժողովրդի պատմության նախնական շրջանը լուսաբանող մինչ այս անընդունելի, մերժված կամ ուշադրության չարժանացած հաղորդումներն ու տվյալները: Եթե այլ աղբյուրներում ընդգծված գծով կամ ընդհանրապես չի խոսվում հայկական ցեղերի մասին[12], ապա այս 3 հիմնական ցեղամիավորումները և հատկապես գրանցից 2 առաջնայինները վկայված են հայ և օտար, հին և միջնադարյան համարյա բոլոր առաջնային աղբյուրներում, ընդ որում մեծ մասամբ այն նույն անվանումներով ու տեղադրությամբ, ինչ որ հայոց ծագումնաբանությունում:

Ուրարտական աղբյուրներ[13]

Հայոց ծագումնաբանության հետ համադրումից, ուրարտական աղբյուրներում տարածքով անմիջապես երևակվում են նույն երեք ցեղատարածքային միավորումները, հատկապես դրանցից երկու առաջնայինները:

---

12 Ուրարտական սեպագիր աղբյուրներում Հայկական լեռնաշխարհի տարածքում հիշատակված են երկրներ կոչված տարբեր կազմավորումներ: Դրանք թե՛ տեղադրությամբ, թե՛ անվանումներով հաճախ համապատասխանում են հայոց ծագումնաբանության նահապետ-ցեղերին պատկանող երկրամասերին (Աղա-Արագածոտն > Արամանյակ, Երեքուսխե-Մասյացոտն > Ցոլակ-Փառոխ, Աբելիանեխե-Աբեղյանք > Աբել, Գիարնիա-Գառնի > Գառնիկ, Վելեքունե-Գեղարքունիք > Գեղամ, Երիախե-Շիրակ > Շարա, Լուշա-Գուգարք > Գուշար, Ծուլուկու-Ծղուկ > Սիսակ, Ուրտեխե-Արցախ > Առան): Հավանական է, որ ներուրարտական այս երկրները հայոց ծագումնաբանության նույն նահապետ-ցեղային տիրույթներն են:

13 Г. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960.

Առաջին նշանակալից միավորը Վանա լճի ավազանը և մերձակա շրջաններն ընդգրկող Բիայնան է: Սա ուրարտական թագավորներին պատկանող նախնական, բուն տիրույթն էր, որից դուրս նրանք նվաճում էին զենքի ուժով և ուր նրանք ուղարկում էին ռազմավարն ու գերիներին: Բիայնան տարածքով համապատասխանում է հայոց ծագումնաբանության Հայկյան ցեղամիավորման տարածքին:

Մյուս նշանակալից միավորը Արարատյան դաշտավայրով Երիախե-Շիրակ, Կաթարզա-Գոդերձական (Գուդարք), Ծուլուկու-Սյունիք, Ուրտեխե-Արցախ ձգվող, ընդհանուր անունով Էթիունե կոչվող երկրամասն է[14]: Այն իր հերթին բաժանված է ավելի մանր, հաճախ իրենց թագավորները կամ առաջնորդները ունեցող երկրների և ընդհանուր տարածքով հիմնականում համապատասխանում է հայոց ծագումնաբանության Արամանյակյան ցեղամիավորման տարածքին:

Հայոց ավանդության երրորդ՝ Կադմոսյան ցեղամիավորմանը կարող է համապատասխանել ուրարտական աղբյուրների Արդինե քաղաքի երկիրը՝ ասորեստանյան աղբյուրների Մուծածիրը: Կորդուքից հարավ-արևելք տեղադրվող այս միավորը[15], որի սահմանները ճշգրտված չեն, ենթակա էր Բիայնային և ընդգրկված էր Ուրարտուի մեջ, բայց ուներ թագավոր՝ հետևաբար թագավորության կարգավիճակ:

Միանգամայն ակնհայտ է, որ Ուրարտուի 3 հիմնական ցեղատարածքային միավորները տարածքներով հիմնականում համապատասխանում են հայոց ծագումնաբանության 3 ցեղամիավորումներին: Չեն համապատասխանում դրանց անվանումները, բայց այս միավորներն ընդգրկող երկրներին տրված ընդհանրական անվանումները նույնն են: Թե՛ Խորենացին, թե՛ Մար Աբասյան աղբյուրից օգտված մյուս հեղինակը՝ Սեբեոսը, այս ցեղատարածքային միավորներով կազմված Հայաստանին են միայն տալիս «երկիրն Արարադայ» ընդհանրական անվանումը, ինչը համապատասխանում է նույն միավորներից կազմված երկրին ասորեստանցիների տված «Ուրարտու» անվանմանը: Նման ձևով՝ «Արարատի և Մասիսի երկիր» է կոչված նույն ժամանակների Հայաստանը նաև վրաց ծագումնաբանությունում[16]:

Ընդհանուր անվանումների նույնությունը դեռևս չի նշանակում, որ հայկական 3 ցեղամիավորների պատմությունը սկսվել է ուրարտական շրջանից: Այս առումով անհրաժեշտ է ասել հետևյալը.

Ի տարբերություն Խորենացու, Սեբեոսը Հայկի և Բել-Նեբրովթի բախումը ներկայացնում է ավելի շուտ ոչ թե որպես էթնիկ, այլ կրոնական հակամարտություն: Նրա համաձայն, Բելը իրեն վեր է գասել մարգկային բնությունից և պարտադրել, որ իր պատկերի առաջ իրեն մեծարեն «աստո-

---

14 Ուրարտական սեպագրերում Էթիունյան երկրներ են համարվում Վիտերուխեն, Լուշան, Կաթարզան (Գուգարք), Երեքուախեն (Մասյացոտն), Ուլուանեն (Կոտայք), Երիախեն (Շիրակ), Աբունեն(Հավնունիք), Աբելյանեխեն (Աբեղյանք), Ուդուրե Եթիուխեն (Սևանի ավազան), Վելիքուխեն (Գեղարքունիք):

15 Արգինեում թագադրվելու մասին Ուրարտուի արքայի թողած սեպագիրը հայտնաբերվել է Ուրմիա լճից հարավ-արևմուտք գտնվող ժամանակակից Ռևանդուզ բնակավայրի մոտակայքից:

16 Լ ե ո ն տ ի Մ ր ո վ ե լ ի. Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմությունը, գլուխ I.– Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (այսուհետև՝ ՀԺՊՔ). Երևան, 1981, էջ 111:

ւածաւրէն շքով»: Բայց Հայկը «ոչ կանգնէր ի տան իւրում զպատկեր նորա» և «առհամարեաց զնա աստուած կոչէլ»: Այդ պատճառով Բելը հարձակվել է Հայաստանի վրա: Սեբեոսի տեսանկյունով է այս հարցին նայում նաև Թովմա Արծրունին[17]:

Նման իրավիճակ, երբ Միջագետքը փորձում էր իր դավանանքը պարտադրել Հայկական լեռնաշխարհին, իսկ վերջինս ընդդիմանում էր, ինչպես նկատել են որոշ հետազոտողներ[18], հատուկ էր մ.թ.ա III հազարամյակին: Հայկի և Բելի բախման հետ հատկապես ընդհանրանում են այն դիցաառասպելական կամ պատմական բնույթի դեպքերը, երբ իրեն աստված հռչակած Միջագետքի հզոր տիրակալը սպանվել է Հայկական լեռնաշխարհ արշավելիս: Այս առումով «Արարադայ» երկիրը ոչ միայն ժամանակով, այլև անվանումով համընկնում է որոշ հետազոտողների կողմից Հայկական լեռնաշխարհում կամ դրան հարավից մերձակա երկրամասերում տեղադրվող «Արատտա» կոչվող երկրի հետ[19], որը նույնպես Միջագետքի հետ գտնվում էր նույն դավանական բնույթի, դեռևս ոչ այնքան սուր հակադրության մեջ: Այս նույն ժամանակներում են տեղադրում Հայկի հաղթանակը Բելի դեմ թե՛ հայոց ծագումնաբանությունը, թե՛ հայ միջնադարյան ժամանակագիրները[20]: Դրասխանակերտցու հաշվարկով դա տեղի է ունեցել մ.թ.ա. 2430 թ.: Նույն ժամանակներին են հանդում հետազոտողները նաև տոմարագիտական տվյալներով[21]: Լեզվաբանական տվյալների համաձայն, նույն հազարամյակի սկզբին մի քանի բարբառային տարբերակներով, որպես «առանձնակի» լեզու արդեն գոյություն ուներ հայերենը[22]: Իսկ սա նշանակում է, որ ժամանակագրորեն համապատասխանում են հայ ժողովրդի պատմության սկիզբը համաձայն հայոց ծագումնաբանության, և հայոց լեզվի պատմության սկիզբը համաձայն լեզվաբանական տվյալների:

Հին կտակարան, Երեմիայի կոչը

Ուրարտական աղբյուրներից անմիջապես հետո, հայկական ցեղատարածքային միավորների վերաբերյալ վկայում է Աստվածաշունչը: Դա վե-

---

17. Սեբեոս, Ա, էջ 2–5: Թովմա Արծրունի և Անանուն. Պատմություն Արծրունյաց տան,. Ի, Բ, Երևան, 1985, էջ 36–40:

18 Գ. Ջանոյան. «Բաբելոնի Ակիտու տոնահանդես» սեպագիր արձանագրությունը.– «Գարուն», 1990, №2: Ա. Մովսիսյան. Բարեպաշտ արքաների կայսրությունը. Երևան, 1997, էջ 24–25:

19 Ա. Մովսիսյան. Հնագույն պետությունը Հայաստանում Արատտա. Երևան, 1992:

20 Հայոց ծագումնաբանության համաձայն Հայկի և Բելի հակամարտությունը սկսվել է «լեզուների բաժանումից» ոչ շատ ժամանակ հետո: Ըստ Եվսեբիոս Կեսարացու, լեզուները բաժանվել են մ.թ.ա. III հազարամյակի կեսերին (Եվսեբի Պամփիլեայ Կեսարացի. Ժամանակականք. Վենետիկ, 1818, էջ 139): Նույն ժամանակներում է տեղադրում Հայկի և Բելի բախումը Եվսեբիոսի ժամանակագրությամբ ուղեկցվող հայ միջնադարյան պատմագրությունը (Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն. գիրք 1, գլ. Դ, էջ 58: Դրասխանակերտցի, էջ 26. Ներսես Պալիենցի. Իշխանութիւն և թագաւորք Հայոց.– Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. 2, էջ 200):

21 Ղ. Ալիշան. Յուշիկք Հայրենյաց Հայոց. հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 95-96 (ըստ Ղ. Ալիշանի Հայկը Բելին հաղթել է մ.թ.ա. 2492 թ.): Այլ տոմարագետների կարծիքների մասին տե՛ս ՀՍՍՀ, Մատենադարան.– Գիտական նյութերի ժողովածու, №1, 1941, էջ 23:

22 Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 24–25, 29, 252–256:

բաբերում է մ.թ.ա. 605–590 թթ. միջև տեղադրվող[23] Երեմիա մարգարեի հանրահայտ կոչին, որով ընդդեմ Բաբելոնի են հրահրվում նրանց ավանդական թշնամիներ հանդիսացող Հայկական լեռնաշխարհի երկրներն ու Մարաստանը[24]: Այս կոչը թարգմանվել է մի շարք հին լեզուներով, որոնք բոլորն էլ ունեն պատմագիտական առաջնային կարևորություն, քանի որ նույն ժամանակների իրավիճակը ներկայացնում են տարբեր տեսանկյուններով:

Նախորդ տվյալների համալսատկերում ընդգծվում են հատկապես Երեմիայի կոչի Հովնաթան Բաբունու մեկնությունում հիշված հակաբաբելոնյան երկրների անվանատարբերակները՝ «Կորդվաց, Խուրմինե և Հադեր թագավորություններ», որոնք համապատասխանում են հայոց ծագումնաբանության երեք՝ Կադմոսյան, Արամանյակյան և Հայկյան նահապետացեղային միավորումների անվանումներին:

Ուրարտուի ցեղատարածքային միավորների հետ համադրությամբ «Կորդվաց» միավորին համապատասխանում է Արդինե-Մուծածիրը, «Խուրմիններին»՝ Էթիունեն և «Հադերին»՝ Բիայնան: «Հադեր-Հադ» ձևը ըստ ամենայնի ծագում է «Հալդ» ձևից, ինչից ենթադրելի է, որ սույն երկրանունը ծագում է Բիայնայի գերագույն աստծո «Խալդի» անունից:

Երեմիայի կոչի մյուս տարբերակները ճիշտ մեկնաբանելու համար անհրաժեշտ է նկատի առնել, որ քննարկվող ժամանակներում՝ մ.թ.ա. VII–VI դդ., Հայկական լեռնաշխարհին վերաբերող ժամանակի աղբյուրները հիշատակում են Միննի-Մանայի թագավորությունը հարավ-արևելքում, որը մինչ այդ հիմնականում ընդգրկված էր Ուրարտուի մեջ, և սկյութական Ասքանազի թագավորությունը՝ հյուսիս արևելքում: Այս միավորներն են հիշատակված Երեմիայի կոչի եբրայական բնագրում՝ «Արարադի, Միննիի և Ասքանազի թագավորություններ»: Այստեղ «Արարադը» հավանաբար հավաքական անվանում է, որով նկատի են առնված բուն հայկական երեք թագավորությունները, իսկ «Միննիի և Ասքանազի թագավորությունները» բուն հայկական միավորումներին մերձավոր վերոհիշյալ թագավորություններն են: Այն, որ «Արարադի թագավորություն» դարձվածքը հավաքական անվանում է, հաստատում է Երեմիայի կոչի հունարեն տարբերակը, որից կատարված է հայերեն թարգմանությունը՝ «Այրարատյան թագավորութեանցն և Ասքանազայ գնդին»: «Այրարատյան թագավորութեանցն» հոգնակի ձևից ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է մի քանի միավորների: Նույնն է հաստատում Երեմիայի կոչի քաղդեերեն տարբերակի «Կարդու թագավորություններ» հոգնակի անվանաձևը: Հայանի է, որ քաղդեացիները Կարդու-կարդուներ ասելով նկատի են ունեցել Հայաստանն ու հայերին, և այստեղ «Կարդու թագավորություններ»

---

23 Б. Б. Пиотровский. История и культура Урарту. Ереван, 1944, с. 136; И. М. Дьяконов. Последние годы урартского государства.— Вестник древней истории (далее—ВДИ), 1951, №2, примеч. 4.

24 Երեմիա, ԾԱ, 27, թարգմանության տարբերակները տե՛ս ՀԺՊՔ, էջ 117: Երեմիայի կոչի եբրայերեն բնագիրը ծագում է մ.թ.ա. VI դ. սկզբներից: Քաղդեերեն թարգմանությունը տեղադրվում է մ.թ.ա. VI–II դդ., հունական թարգմանությունը՝ մ.թ.ա. II դ., ասորական (Պիշտա) թարգմանությունը և Հովնաթան Բաբունու մեկնությունը՝ II–IV դդ. (տե՛ս Աստվածաշունչը 1000 լեզուներով. Պեյրութ, 1938): Հ. Մելքոնյան. Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից. Երևան, 1970:

դարձվածքը ընկալվել է հայկական թագավորություններ իմաստով: Այս տարբերակները կարևոր են նրանով, որ ի տարբերություն մի քանի թագավորություններ հիշատակող մյուս տարբերակների, օգտագործված են ընդհանրական հոգնակի անվանումներ, որոնք այս երկրների էթնիկ հարազատությունը հաստատող փաստարկներ են: Դրանցից նաև հետևում է, որ Երեմիայի նկատի ունեցած ժամանակներում Հայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել 5 թագավորություններ՝ երեքը արմատական, որոնք արտահայտված են հայոց ծագումնաբանությունում, իսկ երկուսը՝ համեմատաբար նորակազմ:

Երեմիայի կոչի և դրա թարգմանության տարբերակներից միաժամանակ ենթադրելի է, որ Ուրարտուն ոչ թե կործանվել էր, այլ ցեղատարածքային միավորներին համապատասխան, բաժանվել էր մի քանի թագավորությունների:

Այսպիսով, Երեմիայի կոչի ներկայացված տարբերակներում շատ ավելի ընդգծված ձևով, մ.թ.ա. VII–VI դդ. արդեն թագավորության կարգավիճակ ձեռք բերած, ակնհայտ են այն նույն 3 ցեղատարածքային միավորները, որոնք թե՛ անվանումով, թե՛ տեղակայությամբ, հիմնականում համապատասխանում են հայոց ծագումնաբանության և Ուրարտուի 3 հիմնական ցեղատարածքային միավորներին:

Հին հունական աղբյուրներ

Հերոդոտոսը Աքեմենյան սատրապությունների շարքում հիշատակվող Հայաստանի վերաբերյալ ասում է հետևյալը. «Պակտյուիկեից, արմեններից և հարևաններից մինչև Եվքսինյանը, ստացվում էր 400 տաղանդ... սա XIII նահանգն էր»[25]:

Հունարեն բնագրի «Αρμενιων» հոգնակի ձևը որոշ դեպքերում թարգմանվել է եզակի՝ «Արմենիա»: Հ. Մանանդյանը և Ս. Կրկյաշարյանը նախընտրել են «արմեններ» ձևը: Հավանական է համարվում նաև «Արմենիաներ» հոգնակի ձևը[26], որն առավել ընդունելի է ներկայացված տվյալների թելադրանքով: Վերոհիշյալ աղբյուրների համաձայն, ընդհուպ մինչև Հերոդոտոսի ժամանակները, Հայկական լեռնաշխարհում իսկապես գոյություն են ունեցել մի քանի հայկական ցեղային կազմավորումներ ու թագավորություններ, և այստեղ Հերոդոտոսի հիշատակած «Արմենիաներ» հոգնակի անվանաձևը կարող է լինել ժամանակի պատմական իրողության ճշգրիտ արտահայտություն: Այսինքն՝ հույն պատմիչը հոգնակի ձևով կարող էր նկատի ունենալ ցեղային հիմքեր ունեցող այն նույն հայկական միավորումները, որոնք նկատի են առնված Երեմիայի կոչի հունարեն-հայերեն թարգմանության «Արարատյան թագավորությանցն» և քաղդեերեն տարբերակի «Կարդու թագավորություններ» հոգնակի անվանաձևերում:

Հայկական ցեղային միավորումների մասին իր «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» երկերում[27] առավել հանգամանալից տեղեկություններ է հաղորդում Քսենոփոնը (մ.թ.ա. 430–354 թթ.), որը հունական նահանջող զորաբանակի հետ մ.թ.ա. 401-400 թթ. անցում է կատարել Հայաստանով:

---

25 Հերոդոտոս, III, 93, էջ 197:
26 ՀԺՊՔ, էջ 160, ծանոթ. 5:
27 Քսենոփոն. Անաբասիս. Երևան, 1970, նույնի՝ Կյուրոպեդիա. Երևան, 2000:

«Անաբասիսի» համաձայն, Հայկական լեռնաշխարհ մուտք գործած հունական 10000-անոց զորաբանակի ճանապարհը առաջինը փակում են կարդուխները: Դա մի հզոր և ռազմատենչ ցեղամիավորում էր, որոնց երկրի միջով անցնելիս են հելլեները հանդիպում ամենաուժեղ դիմադրության և ենթարկվում ամենածանր փորձությունների: Այստեղից հույները մտնում են «Արմենիա» կոչվող երկիրը, որի հետ կարդուխները հակադրության մեջ էին, բայց անհրաժեշտության դեպքում իրենց փոխհարաբերությունները կարգավորում էին պայմանագրերով[28]:

Արմենիայի բանակը կազմված էր արմենների, մարդերի և խալդայների զորամիավորներից[29], ինչից հետևում է, որ դրանք հանդիսացել են այս երկրի առաջնային էթնոցեղային միավորները: Մարդերին վերագրվում է իրանական ծագում: Դա ոչ բնիկ, եկվոր ցեղ էր, որը Կասպից ծովի հարավային ավազանից թափանցելով հաստատվել էր Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան կողմերում[30]: Ինչ վերաբերում է արմեններին ու խալդայներին, ապա Քսենոփոնը իր մյուս երկում՝ Կյուրոպեդիայում, խոսում է Արմենիայի միայն այս 2 ցեղերի մասին: Մարերի գլխավորած համաարիական դաշնային բանակ[31] ուղարկված արմեններ՝ 24000, խալդայներ՝ 4000 զորաքանակներից՝ ակնհայտ է, որ արմենները գերմեծամասնություն են կազմել: Բայց ամեն անգամ խալդայներին անդրադառնալիս, Քսենոփոնը նրանց ներկայացնում է որպես Հայաստանում նշանակալից ռազմաքաղաքական տեղ ու գեր ունեցող անկախ և ռազմունակ ցեղ:

Մարաց վերջին թագավորի օրոք, համաարիական բանակի գլխավոր հրամանատար, հետագայում Աքեմենյան Պարսկաստանի հիմնադիր Կյուրոս Մեծի (մ.թ.ա. 550–538 թթ.) միջնորդությամբ, արմենների ու խալդայների միջև կնքվում է զինակցության ու համակեցության (փոխադարձ ամուսնություններ ու հողօգտագործում) պայմանագիր, որի առաջին կետը պարտավորեցնում է, որ «երկու կողմերը իրար հանդեպ կպահպանեն իրենց ազատությունը»[33]: Այս պայմանագրով Արմենիայի 2 առաջնային ցեղերը որպես ինքնավար միավորներ՝ ըստ էության միավորվել են մեկ պետության մեջ:

Եթե Կյուրոպեդիայի համաձայն արիական միացյալ բանակում ընդգրկված հայոց բանակը, որը գլխավորում էր արքայորդի Տիգրանը, կազմված էր արմենական ու խալդայական զորամասերից, ապա ըստ Թովմա Արծրունու, արդեն հայոց թագավոր նույն Տիգրանի բանակը կազմված էր «ղզօրսն հարավային և հյուսիսային»[34]: Աշխարհագրական գործոնով հայոց զինուժի այս բաժանումը նույնանում է արամանյակյան ու հայկյան կամ դրան համապատասխանող էթիուների ու Բիայնայի ցեղատարածքների հյուսիս-հարավ տեղակայությանը, իսկ էթնիկ գործոնով՝ Քսենոփոնի հիշատակած արմեններին ու խալդայներին:

---

28 Անաբասիս, III, 5(16), էջ 81:
29 Նույն տեղում, IV, 3(4), էջ 89:
30 Է. Դանիելյան. Մարդերի ցեղը հին Հայաստանում.– ՊԲՀ, 1976, N 1:
31 Այս մասին տե՛ս Մ. Օհանյան. Հայաստանը հին աշխարհի երկրների դահակարգում.– ՊԲՀ, 2001, № 2:
32 Կյուրոպեդիա, II, 1 (6), III, 1 (33, 34), 3(1), էջ 61, 104, 116:
33 Նույն տեղում, III, 2(23, 24), էջ 113-114:
34 Թովմա Արծրունի և Անանուն, I, ե, էջ 64:

Անաբասիսի համաձայն, արմենները հանդիսացել են նաև «Արևմտյան Արմենիայի» հիմնական բնակիչները, բայց Հայաստանի այս երկրամասը շատ ավելի բազմացեղ էր, հանձինս հյուսիսային լեռնային շրջաններում բնակվող փասիանների (Բասեն), հեսպերիտների (Սպեր), տաոխների (Տայք), խալյուբների և Պոնտական լեռներում բնակվող մի քանի այլ ցեղերի: Ինչպես բուն Արմենիայի դեպքում, այս երկրամասի էթնիկ կազմը արտահայտված է դրա զորքերի էթնիկ կազմով: Արևմտյան Արմենիայի «հյուպարքոս» Տիրիբազոսը բացի «իր զորքը», որը ըստ ամենայնի կազմված էր արմեններից, ծառայության տակ ուներ նաև վարձկան տաոխների ու խալյուբների[35]:

Ակնհայտ է, որ Քսենոփոնի համաձայն, Հայկական լեռնաշխարհում առաջնություն են ունեցել 3 էթնոցեղային միավորներ, որոնք են արմեն-ները, խալդայները և կարդուխները: *Միայն այս միավորների վերաբերյալ է հույն պատմագիրը նշում, որ նրանք միմյանց հետ փոխհարաբերությունները կարգավորել են պայմանագրերով: Այս ցեղերն ըստ էության կրում են այն նույն անվանումները, ինչ որ նախորդ աղբյուրներում վկայված Հայկական լեռնաշխարհի ցեղային եռյակը.* Արմենակյան, Հայկյան, Կադմոսյան *(հայոց ծագումնաբանություն), կամ՝* Խուրմինե, Հաղեր, Կարդու *(Հովնաթան Բաբունի)*:

Քսենեփոնի հաղորդումներից հետևում է, որ կարդուխների տիրույթները մոտավորապես համապատասխանել են հայոց ծագումնաբանության Կադմեաց տանը կամ Մեծ Հայքի Կորդուք նահանգին: Հույն պատմագրի ժամանակներում հայկական ցեղային եռյակից առավել մեծ տարածում են ունեցել արմենները, որոնք հավանաբար Կուր-Արաքսյան միջնատարածքը կամ էթիունեն ընդգրկող իրենց նախնական տիրույթներից տարածվել կամ իրենց գերիշխանությանն են ենթարկել նաև Արևմտյան Արմենիան, որն ընդգրկել է Տիգրիսի ակունքներից հյուսիս տարածվող Ծոփքը, Բասենը, Տայքը, Ապերը և հասել Պոնտական լեռներ: Բացի այդ, «Արմենիա» է կոչվել նաև կարդուխների երկրի հյուսիս-արևմուտքից Տիգրիսի ակունքներով 30 փարսախ (մոտ 160 կմ) մինչև Արևմտյան Արմենիա ձգվող հատվածը[36]: *Սա ենթադրել է տալիս, որ Արմենիայի մեջ ընդգրկված է եղել նաև Վանա լճի ավազանն ընդգրկող Հայկյան ցեղամիավորման կամ Բիայնայի տիրույթների ողջ արևմտյան հատվածը: Այս դեպքում Հայկյաններին համապատասխանող խալդայների տիրապետության տակ գտնվող երկրամասը կարող էր ընդգրկել միայն Վանա լճի արևելյան ավազանը, որտեղ գտնվում էր Տուշպա-Վանը, այսինքն Ուրարտու-Բիայնայի կենտրոնական, մայրաքաղաքային երկրամասը (տե՛ս քարտեզ 2)*[37]:

---

35 Անաբասիս, IV, 4(4, 18), էջ 93, 94: VII, 8(25), էջ 197:

36 Նույն տեղում, IV, 3(1-4), 4(1-5), էջ 89, 93:

37 Խալդայներին Քսենոփոնը իր երկերում շատ է անդրադառնում, բայց նրանց երկրի տեղակայության մասին բավարար պատկերացում չի տալիս: Սա կարելի է բացատրել նրանով, որ նա իր հայաստանյան երթում խալդայների երկրով չի անցել:

Հայագիտության մեջ արմատավորված է խալդայներին Հայկական լեռնաշխարհի հյուսիսաբևմտյան ծայրերում բնակված խալյուբների հետ նույնացումը, ինչը բխում է որոշ հիմնավոր տվյալներից, հատկապես Ստրաբոնի «Ներկայիս խալյուբները հնում կոչվել են խալդայներ» հաղորդումից (С т р а б о н. География, XI, 3(19), М., 1964, с. 515): Բայց Քսենոփոնը տարբեր առիթներով առանձին-առանձին խոսում է այս ցեղերի մասին, իսկ մի դեպքում դրանց հիշատակում կողք-կողքի (Անաբասիս, IV, 3(3), 4(18), 5(34), 6(4),



7(15), V, 5(1), 5(16), VII, 8(25), էջ 89, 94, 98, 99, 103, 121, 122, 197): Նույնը միանգամայն ակնհայտ է նրանից, որ խալդայները ծառայում էին դեռևս Արմենիայի բանակում, իսկ խալյուբները բնակվում էին Ալեմտյան Արևելյան Արևենիայի հյուսիսում և ծառայում այդ երկրամասի բանակում: Այսինքն, միանշանակ նա այս ցեղերին տարբերում է մյուսներից: Հայկական լեռնաշխարհի հորդուքից հյուսիս-արևմուտք ընկած երկրամասերով անցնող Քսենոփոնը չի մտնում խալդայների երկիր: Նրանց երկիրը չի հիշվում նաև այս երկրամասերի մեծ մասը կազմող Արևմտյան Արմենիայի մեջ մտնող ցեղային տիրույթների շարքում: Նույնն է հետևում Հերոդոտոսի տվյալներից, որը «Հալյուս գետից այս կողմ» բնակվող ցեղերի շարքում խալյուբներին հիշատակում է, բայց խալդայներին ոչ (I, 28, էջ 14): Այս տվյալները ժխտում են խալդայների երկիրը Հայաստանի արևմուտքում տեղադրող և նրանց խալյուբների հետ նույնացնող տեսակետները:

Քսենոփոնի տվյալներից հետևում է, որ Հայկական լեռնաշխարհում տեղի էր ունեցել ցեղային հեղաշրջում. ի տարբերություն նախորդ՝ ուրարտական ժամանակների, երբ առաջնային ցեղային եռյակից գերիշխանությունը պատկանում էր Հայկ-Բիայնա ցեղատարածքային միավորին, հունական աղբյուրների համաձայն, քննարկվող ժամանակներում գերիշխանությունը անցել էր արմենական ցեղամիավորմանը:

Ակնհայտ է, որ հին հունական աղբյուրների համաձայն, մ.թ.ա. VI–IV դդ. Հայկական լեռնաշխարհում շարունակել են դոյատևել նույն՝ 3 ցեղատարածքային առաջնային միավորումները, որոնց դոյությունը նախորդ ժամանակներում նույն տեղագրությամբ կամ անվանումներով վկայում են ուրարտական, եբրայական, քաղդեական, ասորական և հայ միջնադարյան աղբյուրները:

Այսպիսով, ներկայացված քննությունից հետևում է, որ նախնական ժամանակներից, ժամանակագրական աղբյուրների համաձայն առնվազն Ուրարտուի ժամանակներից մինչև Երվանդունիներ ներառյալ, Հայկական լեռնաշխարհում դոյություն են ունեցել 3 ցեղատարածքային միավորումներ:

* * *

Հայկական 3 ցեղատարածքային միավորների դոյությունը հավաստում է նաև դրանց գլուխ կանգնած արքայատների ղուդահեռ դոյությունը:

Հայկական լեռնաշխարհի առաջնային ցեղային եռյակից Կադմեաց տան՝ Կորդուքի շրջանում, շումերա-աքքադական և ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում են «Կուտիում-Գուտիում», «կուտիների երկիր» կամ «Կուտմուխ, Կադմուխ» անվանատարբերակներով երկրներ, որոնք թագավորներ ունեցող ինքնուրույն միավորներ էին[38]: Նույն շրջանում է տեղակայվում Ուրարտուի գերիշխանության տակ գտնվող Արդինե-Մուծածիր երկիրը, որը նույնպես ուներ իր թագավորները: Օրոնտաս-Երվանդունիների օրոք, ինչպես ասվեց, կարդուխների երկիրը, այսինքն նույն Կորդուքը լիովին անկախ միավոր էր: Հավանաբար այն նույնպես եղել է թագավորություն, քանի որ հաջորդ՝ Արտաշիսյան ժամանակներում Կորդուքը թեև գտնվում էր Հայաստանի գերիշխանության տակ, բայց պահպանում էր թագավորության կարգավիճակ և նույնիսկ Տիգրան Մեծի օրոք ուներ իր թագավորը: Հետագայում Կորդուքը Մեծ Հայքի առավել բարձր ինքնավարություն ունեցող 4 սահմանակալ-բդեշխություններից մեկն էր:

Վանա լճի ավազանը ընդգրկող Հայկյան ցեղատարածքային միավորի հետ նույնացող Բիայնայի արքաները, որոնք Ուրարտուում իշխեցին մ.թ.ա. IX–VII դդ., հիմնականում հայտնի են ուրարտական ու ասորեստանյան աղբյուրներից: Առկա տվյալները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել նաև նրանց հետագա պատմության վերաբերյալ:

---

38 И. М. Дьяконов. Общественный и государственный строй древнего Двуречья. Шумер, М., 1959, с. 196-248; *Նույնի.* Ассиро-вавилонские источники по истории Урарту (далее АВИИУ).— ВДИ, 1951, N2, текст 1-6, 10, 23, 26. *Ա. Մովսիսյան. Բարեպաշտ արքաների ..., էջ 8–17:*

Մովսես Խորենացին և Թովմա Արծրունին Արտաշեսի մանկությունը և նախնական գործունեությունը սերտորեն առնչում են Վանա լճի արևելյան ավազանից մինչև Ուրմիա լիճ ընկած տարածքի հետ[39]: Սա սոսկ ժամանակավոր բնակության վայր չէր: Արտաշեսի մանկության երկրամասը, ըստ ամենայնի, մատնանշում է նրանից սերող արքայական տոհմի ծագման բուն վայրը: Դա հաստատում է Արտաշեսին վերաբերող առանցքային հարցերի առնչումը այս երկրամասի հետ:

Հայոց գահը Երվանդ Վերջինից խլելու պայքար մղող Արտաշեսը Երվանդի հետապնդումներից թաքնվում է Վան քաղաքի և Տոսպ դավառի ժայռոտ, լեռնային շրջաններում: Նույն վայրից սկսելով է, որ Արտաշեսը հասնում է «ի բարձրագոյնսն» այսինքն թագավորության: Այս երկրամասում էր գտնվում Արտաշիսյան տոհմի ողջ հարստությունը, որը Արտաշեսը Երվանդից թաքցրել էր իր տոհմական կալվածքի տարբեր տեղերում: Նույն երկրամասում գտնվող Բագրևանդում (Բագարան, Սուկավետ) էր գտնվում նաև Արտաշեսի տոհմի պաշտամունքային կենտրոնը, որտեղից նա իր նորակառույց մայրաքաղաք՝ Արտաշատ է տեղափոխում «զամենայն կուռս հայրենիս»: Հայոց թագավոր դառնալուց հետո Արտաշեսը չի մոռանում իրեն ապաստարան հանդիսացած երկրամասը և Վանի մոտակայքում կառուցում է «ապարանս արքայանիստ, ... գեղեցկայարմարս պարսպաւորս» քաղաք, գուցե իր նախնական մայրաքաղաքը, այն իր անունով կոչելով Արտամատ: Այս տվյալները լուրջ հիմք են ենթադրելու, որ Վանա լճի արևելյան ավազանը հանդիսացել է Արտաշիսյանների տոհմային կալվածքը, որտեղ հաստատված տոհմը հանգես է եկել որպես Երվանդունիներին հակառակորդ, ընդդիմադիր և մրցակից ուժ:

Երվանդի ու Արտաշեսի պատմությունը թեև Խորենացու «առաջ ընկած» ժամանակագրությամբ[40] տեղադրված է Տրդատ I-ի (52–88 թթ.) ժամանակներում, բայց իրականում այն վերաբերում է Ստրաբոնի հիշատակած Օրոնտասին (Երվանդ IV, մ.թ.ա. 220–201 թթ.) և նրան հաջորդած Արտաքսիասին (Արտաշես I, մ.թ.ա. 201–160 թթ.)[41]: Բայց այս պատմության մեջ, հավանաբար, խտացված է շատ ավելի ընդգրկուն ժամանակաշրջան: Թովման Երվանդին ու Արտաշեսին համարում է մարաց թագավորության և պարսից Արտաշես թագավորի ժամանակակիցը: Վերջինս հայ նախարարների հետ սպառնում էր կործանել «Ասորոց» և Նինվեի թագավորությունը: Սա հիշեցնում է Քսենոփոնի հիշատակած Տիգրանի և նրա հոր՝ հայոց թագավորի, ըստ Խորենացու Երվանդ Սակավակյացի ժամանակները (մ.թ.ա. VI դ. կեսեր), երբ մարաց, պարսից և հայոց միացյալ բանակը, Կյուրոս Մեծի գլխավորությամբ պատրաստվում էր հարձակվել Ասորեստանի վրա[42]:

---

39 Խորենացի, II, ԼԷ, ԼԸ, ԽԴ, ԽԶ, ԽԹ, էջ 190–194, 200–206, 210: Թովմա Արծրունի և Անանուն, I, Է, ԷԸ, էջ 82–92:

40 Մ. Օհանյան. Մար Առասյան աղբյուրի ծագումը և Մովսես Խորենացու Հայոց պատմությունը. – ՊԲՀ, 1996, N 1–2:

41 Страбон, XI, 14(15), с. 500.

42 Կյուրոպեդիա, II, 1 (7), էջ 61: Քսենոփոնը Կյուրոս Մեծին է վերագրում Ասորեստանի գրավումը, բայց իրականում վերջինս գրավել է Բաբելոնը (մ.թ.ա. 539 թ.):

Խորենացին Երվանդին համարում է «որդի կնոջ Արշակունեաց»[43]: Այս տվյալով վերջինս կարող է լինել Օրոնտաս-Երվանդ II-ի որդին, որի կինը, Քսենոփոնի համաձայն, Աքեմենյան Արտաքսերքսես II-ի (մ.թ.ա. 404–359 թթ.) դուստրն էր[44]: Բայց ըստ պատմիչի, Երվանդը պարսից թագավոր «վերջին Դարեհի» ժամանակակիցն էր[45], ինչով արդեն նա նույնանում է Դարեհ III Վերջինի (մ. թ. ա. 336–330 թթ.) ժամանակակից Օրոնտաս-Երվանդ III-ի հետ[46]:

Այս քննությունից ակնհայտ է, որ Երվանդ Վերջինի և Արտաշես I-ի միջև ծավալված պայքարի հայ պատմագրության միջոցով մեզ հասած դրվագներն, ըստ էության, Երվանդունյան և Արտաշիսյան արքայատոհմերի միջև ծավալված դարավոր պայքարի խտացված պատկերն են ներկայացնում: Դրա առաջին փուլում Երվանդունիներին հաջողվել է ներխուժել Արտաշիսյան տոհմի կալվածք՝ Վան-Տոսպ և գրանից արևելք ընկած լեռնային շրջաններ: Վանի ժայռի վրա Քսերքսես I-ի (մ.թ.ա. 486–465 թթ.) արձանագրությունը[47] վկայում է, որ Երվանդունիները այս նվաճումներին հասել են Աքեմենյանների օժանդակությամբ: Վան-Տոսպ ներխուժելով, Երվանդունիները այս երկրամասը և դրա գլխավոր քաղաքը իրենց անունով վերանվանել են «Երուանդաւան» և «Երուանդական»[48]: Նվաճված քաղաքների վերանվանումը նվաճողների անունով հին աշխարհում ընդունված սովորույթ էր: Նույն Արտաշեսը, երբ գրավում է Երվանդավանը, այն իր «Մար» մականվամբ վերանվանում է «Մարմետ»: Երվանդի անունը այս քաղաքի վրայից «բառնալու», այսինքն վերացնելու նպատակով: Այս պայքարի երկրորդ փուլում, Աքեմենյան տիրապետության անկումով և Երվանդունիների գիրքերի աստիճանական թուլացմանը համաքայլ, հավանաբար, բարձրացել է Արտաշիսյանների վարկը՝ երբ վերջին Երվանդունիները խիստ թուլացել էին, պառակտվել և մանավանդ Ծոփքը, Կոմմագենեն, Հայոց Միջագետքը, հյուսիսային և արևելյան այլ շրջաններ կորցնելով, լիովին վարկաբեկվել էին ու բարոյազրկվել, Արտաշեսը հայոց նախարարների մեծ մասին իր կողմը գրավելով, դուրս է եկել Երվանդ Վերջինի դեմ և հաղթելով նրան, նվաճել հայոց գահը:

Հայաստանում իշխող Օրոնտաս-Երվանդունիներին զուգահեռ մեկ այլ արքայատոհմի առկայությունը հաստատում են նաև հունա-հռոմեական աղբյուրները: Մ.թ.ա 401–400 թթ. Հայաստանով անցնող Քսենոփոնի համաձայն, հայոց բանակը գլխավորել են երկու առաջնորդներ՝ Օրոնտասը (Երվանդ II, մ.թ.ա. 404–360 թթ.) և Արտուխասը[49]: Եթե Օրոնտասին նա համարում է Հայաստանի տիրակալը, ապա ոչինչ չի ավելացնում Արտուխասի կարգավիճակի վերաբերյալ: Այդ մասին կարելի է դատել Դիոդորոսի հաղորդումից, որն ավելի ուշ հանդես եկած Հայաստանի սատրապության տիրակալ մեկ այլ Օրոնտասին (Երվանդ III, մ.թ.ա. 331–300 թթ.) զու-

43 Խ ո ր ե ն ա ց ի, II, ԼԷ, էջ 190: Ինչպես այս դեպքում, Խորենացին հաճախ Աքեմենյաններին չփոթել է պարթև Արշակունիների հետ: Այս մասին տե՛ս Մ. Օ հ ա ն յ ա ն. Մար Աբասյան ..., էջ 295–310:

44 Անաբասիս, II, 4(8), III, 4(13), էջ 47, 75:

45 Խ ո ր ե ն ա ց ի, II, ԼԷ, էջ 190, 192:

46 ՀԺՊ. հ. 1, էջ 505-506:

47 Նույն տեղում, էջ 451:

48 Նույն տեղում, էջ 437:

49 Անաբասիս, IV, 3(4), էջ 89:

գահեռ, խոսում է նաև «Հայերի թագավոր Արդոատեսի» մասին[50]: Օրոնտաս-Երվանդունիներին զուգահեռ, Հայաստանում իշխողների «Արտուխաս» և «Արգոատես» անվանումները, հավանաբար, «Արտաշես-Արտաքսիաս» անվան աղավաղված տարբերակներն են: Սա ենթադրել է տալիս, որ հայագիտությանը հայտնի Արտաշես I-ը բոլորովին էլ առաջին Արտաշեսը չէ և նրան նախորդել են նույն անունը կրող այլ թագավորներ կամ տիրակալներ:

Արտաշիսյան արքայատոհմի ակնհայտ կասլը Վանա լճի արևելյան ավազանի, հատկապես Տոսպ գավառի և Վան մայրաքաղաքի հետ, նրանց ծագումը շաղկապում է նույն՝ Տուշպա-Վանում հիմնված ուրարտական արքայատոհմի հետ: Այս արքայատոհմերի ընդհանրությունը հաստատում են նաև այլ տվյալներ: Եթե ուրարտական արքայատոհմի նստավայրը, նրանց մայրաքաղաքը գտնվել է Վանա լճի արևելյան ավազանում, ապա թագավորների թագադրության տեղը, ուրարտական և ասորեստանյան ժամանակագրական աղբյուրների համաձայն, գտնվել է Բիայնայից դուրս՝ Կորդուքից հարավ-արևելք տեղադրվող Մուծածիր-Արդինեում: Սրան զուգահեռվում է Արտաշիսյանների ծագումը. եթե Արտաշեսի մանկության ու նախնական գործունեության շրջանը, որը մատնանշում է նրա տոհմական տիրույթը, որը հայ միջնադարյան աղբյուրների համաձայն եղել է նույն՝ Վանա լճի արևելյան ավազանը, ապա նրա հոր դերում ներկայացված Սանատրուկի մանկության երկրամասը, որը կարող է լինել այս տոհմի բուն ծագման վայրը և առնչվում է Կորդուքին: Առասպելական պատմության համաձայն՝ Արտաշեսի դեռևս նորածին հայրը ինչ-որ դիպվածով հայտնվում է Կորդվաց լեռներում, մնում ձնաբքի տակ և հրաշքով փրկվում[51]:

Այսպիսով, ներկայացված աղբյուրների համաձայն, թե՛ ուրարտական, թե՛ Արտաշիսյան արքայատոհմերի բուն տիրույթները գտնվել են Վանա լճի արևելյան ավազանում, իսկ նրանց արմատները առնչվում են Կորդվաց աշխարհին: Այս համապատասխանությունը ենթադրել է տալիս, որ ուրարտական արքայատոհմը կամ դրա որևէ ճյուղը, հանձինս Արտաշիսյանների, իր դոյությունը պահպանել է և Երվանդունիներին զուգահեռ, շարունակել է իշխել Վանա լճի արևելյան ավազանը ընդգրկող իր տոհմական տիրույթներում: Դա եղել է գերիշխանության համար անհաշտ պայքար մղող ցեղային 2 արքայատոհմերի զուգահեռ գոյակցություն: Այս անհաշտ գոյակցության արտահայտություն պետք է համարել հյուսիս-հարավ առանցքով ընթացող Երվանդունի ու Արտաշիսյան տոհմերի պայքարը, որը հավանաբար դրան անմիջապես նախորդած արմենների ու խալդայների հակամարտության շարունակությունն էր, ինչի մասին խոսում է Քսենոփոնը: Ըստ ամենայնի, գա ցեղային ժամանակներից ավանդված պայքար էր. Երվանդունիները գլխավորել են Հայաստանի մեծ մասում գերիշխանություն հաստատած արմեններին, իսկ Արտաշիսյանները՝ Վանա լճի ավազանում կամ դրա արևելյան մասում դեռևս որոշակի ցեղային ինքնուրույնություն դրսևորող խալդայ-բիայնացիներին: Այս հակամարտության նախնական փուլ կարելի է համարել նույն՝ հյուսիս-հարավ ա-

---

50 Դիոդորոս Սիկիլիացի, XIX, 23(2), XXXI, 19(5), էջ 130, 153:
51 Խորենացի, II, ԼԶ, էջ 188:

ռանցքով ընթացող էթիունցիների ու բիայնացիների, ցեղային փուլին բնորոշ շատ ավելի դաժան ու թշնամական սլայքարը:

Նախորդ քննությամբ բացահայտվում են Արտաշիսյանների արմատները: Իսկ նրանց հետ զուգահեռ Հայաստանում իշխած Երվանդունիների ծագման վերաբերյալ կարելի է ասել հետևյալը:

Քսենոփոնը հայոց արքայորդի Տիգրանի վախճանի մասին չի խոսում, բայց Կյուրոպեդիայի վերջում հայտնում է, որ Կյուրոսը «մեդացիների, արմենների և կադուսիների» սատրապ է նշանակում կրասեր որդուն՝ Տանաոքսարեսին»[52]: Հետագայում Հայաստանի սատրապները կամ թագավորները հաճախ ազգակցությամբ առնչվում են Աքեմենյանների հետ: Աքեմենյան ծագում ուներ Հայաստանում երկար իշխած Կողոմանոսը (մ.թ.ա. մոտ 359–336 թթ.), որը հետագայում Դարեհ III անունով դարձավ Աքեմենյան Պարսկաստանի թագավոր (մ.թ.ա. 336–330 թթ.)[53]: Ըստ Ստրաբոնի, Օրոնտաս-Երվանդ IV-ը սերում էր Աքեմենյան տոհմի ներկայացուցիչ Հյուգարնեսից[54]: Կոմմագենեի Երվանդունի թագավոր Անտիոքոս I-ը (մ.թ.ա. 69–34 թթ.) ողջ Երվանդունյան տոհմը ծագեցնում է Աքեմենյան արքայից արքա Դարեհ I-ից և նույն ճյուղի շառավիղ, Արտաքսերքսես II-ի փեսա, Արմենիայի տիրակալ Օրոնտաս-Երվանդ II-ից[55]:

Եթե Կյուրոսի իշխանության գալով Հայաստանին տիրեցին մեծ մասամբ «Օրոնտաս-Երվանդ» տոհմական անունը կրող Աքեմենյան ծագում ունեցող տիրակալները, ապա նույնը չի կարելի ասել նախորդ՝ մարական գերիշխանության վերջում մ.թ.ա. VI դ. կեսերին հանդես եկած Արմենիայի թագավորի ու նրա որդու մասին, որն ըստ Քսենոփոնի կոչվում էր Տիգրան: Խորենացին այս Տիգրանին և նրա հորը՝ Երվանդ Սակավակյացին համարում է Պարույր Սկայորդով սկսվող 9 թագավորներից կազմված առանձին արքայացանկի վերջին ներկայացուցիչները: Պատմահայրը Պարույրին ու նրանից սերվող այս արքայատոհմին համարում է «մերոյ աշխարհիս ընիկք պսակաւորք» և «հաւաստի հարազատք»[56], այսինքն ընիկներ, հայեր, բայց դա հակասում է Պարույրի «Սկայորդի» կոչմանը, որը ինչպես «հայորդի ձևը», ըստ էության «սկայ-սակ-սկյութ» նշանակող էթնանուն է: Խորենացու տվյալներից հետևում է, որ սկյութական ծագում ունի նաև այս արքայատոհմի վերջին ներկայացուցիչ Տիգրանը: Նրանից սերված է համարվում Առավենյան տոհմը, որը ծագում է «յազգէ Ալանաց»[57]: Եթե այս արքայատոհմը ամբողջությամբ սկյութական է, ապա հարց է առաջանում, թե որտե՞ղ և ե՞րբ են նրանք թագավորել: Դա ընդարձակ և առանձին անդրադարձ պահանջող թեմա է, ինչի վերաբերյալ սեղմ կարելի է ասել հետևյալը:

---

52 Կյուրոպեդիա, VIII, 7(11), էջ 362:

53 Տե՛ս М. А. Дандамаев. Политическая история Ахеменидской державы, М., 1985, с 254-255, 275, примеч. 71. ՀԺՊ. հ. 1, էջ 922:

54 Страбон, XI, 14(15), с. 500:

55 Գ. Սարգսյան. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 28–33:

56 Խորենացի, I, ԻԲ, էջ 80:

57 Նույն տեղում, I, ԼԱ. II, Ը, ԾԸ, էջ 102, 130, 226:

Հայագիտությունը վաղուց հանգել է այն հետևությանը, որ մ.թ.ա. VII–VI դդ. գոյություն է ունեցել հայ-սկյութական պետություն[58]: Երբեմնի սկյութ-հայկական միության արձագանք ու հաստատում կարելի է համարել Հայաստանը և հայերին երկակի ձևով կոչելու հայ միջնադարյան աղբյուրներում պահպանված հետևյալ օրինակները. «զԱսքանազեան ազգին և Հայաստան աշխարհիս», «Թորգոմական աշխարհին և Ասքանազեան զաւակին», «Թագաւորութեան Թորգոմեան սեռի և Ասքանազանս տոհմի», «իմա Ասքանազեան զմեզ և տուն Թորգոմայ»[59]:

Հնագիտական տվյալները հանգեցրել են այն հետևությանը, որ Ուրարտուի կործանմանը առաջնային մասնակցություն են ունեցել հյուսիսից ներխուժած սկյութները և նրանց հետ դաշնակցած տեղական ուժերը[60]: Ուրարտու-Բիայնային առավել ընդդիմադիր ներքին երկրամասը այդ երկրի հյուսիսային կեսը գրավող Էթիունեն էր, որին համապատասխանում է հայոց ծագումնաբանության Արամանյակյան ցեղատարածքային միավորը և Երեմիայի կոչի Արմինա-Խուրմինե թագավորությունը: Հավանաբար հենց այս ցեղային միավորն է սկյութների հետ մեկ արքայի՝ Պարույր Սկայորդու իշխանության ներքո միավորված, արշավել ու նվաճել Ուրարտուի ամրոցները: Հնարավոր է, որ այս ժամանակներում են արմենները իրենց գլխավորող Սկայորգի-սկայ-սկյութ Պարույրին հայտարարել «մերոյ իսկ ընիկ նախնւոյն» սերունդ և «արեանառուք և հաւաստի հարազատք»: Իսկ Պարույրից առաջ, մինչև Անուշավան Սոսանվեր հանդես եկած իշխողներին, ինչը մոտավորապես համապատասխանում է ընդդիմադիր բիայնական արքաների իշխանության ժամանակներին, ընդհակառակը՝ տրվել են այլազգիներ, ոչ հայեր, ասորեստանցիներ-թշնամիներ, բռնակալներ, հարստահարիչներ որակավորումները[61]: Դա, ըստ ամենայնի, դերիշխանության համար ընդդիմադիր ցեղային արքայատոհմերի պայքարի արդյունք է, երբ մի կողմը իրեն համարել է Հայկից սերված «ընիկ, արյունակից», հետևաբար իշխելու իրավունք ունեցող, իսկ մյուս կողմին ներկայացրել որպես այլազգի, օտար, թշնամի, հետևաբար ապօրինի և անօրեն իշխող: Նույն կարգի օրինակ է այն, որ Երվանդ Վերջինի վերաբերյալ գոյություն ուներ նրա ծագումը նվաստացնող այն պատկերացումը, թե նա

---

58 Г. А. Капанцян. Хайаса—колыбель армян, с. 149; И. М. Дьяконов. История Мидии. М.—Л., 1956, с. 354. Գ. Ջահուկյան. Կիմերների և կիմերերենի պրոբլեմը արդի գիտության մեջ.— ՊԲՀ, 1977, №4: Ф. И. Тер-Мартиросов. Скифское царство в Передней Азии и исторические основы предания о Паруйре Скайорди как о царе Армении.— "Историко-филологический журнал", 1994, N1–2. Ս. Երեմյան. Հայկական առաջին պետական կազմավորումները.— ՊԲՀ, 1968, N3: ՀԺՊ. հ. 1, էջ 438: Բ. Հարությունյան. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի մի քանի խնդիրների շուրջ. Երևան, 1998: Ա. Քոսյան. Նշվ. աշխ., էջ 57–65:

59 Կորյուն. Վարք Մեսրոպ Մաշտոցի. գիրք I, Երևան, 1994, էջ 83, 116: Դրասխանակերտցի. Առաջաբան, էջ 16: Կաղանկատվացի, I, ԺԴ, էջ 32: Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ. հ. 2, էջ 97 (Մաշտոցի անվան Մատենադարան, ձաշոց, ձեռ. №979, էջ 471 ա, բ):

60 Б. Б. Пиотровский. История и культура Урарту, с. 241, 301—306; И. М. Дьяконов. Последние годы урартского государства.— ВДИ, 1951, N2:

61 Սեբեոս, Ա, էջ 6: Դրասխանակերտցի, էջ 22: Պալենցի, էջ 198: Բաղիշեցի, էջ 305:

Արշակունի տոհմից մի տգեղ և վավաշոտ կնոջ ապօրինի որդի է, իսկ վերջինս տարածում էր Արտաշեսին նվաստացնող այն լուրը, թե նա հասարակ ծագում ունեցող, ազգությամբ մար հովվի որդի է[62]*: Բնիկին, Հայկից սերվածին, այսինքն հայազգիին օտարից գերադասելու տրամադրություններ առկա էին և քաղաքական պայքարում շահարկվում էին նաև միջնադարում: Դա արտահայտված է Ստեփանոս Օրբելյանի (XIII–XVI դդ.) հետևյալ մտքերում. «եթե Բագրատունիները, որ գերեվարությամբ բերված էին Հրաչեից», թագավորելու իրավունքի արժանացան, ապա «որքան առավել արժանի էին» թագավորելու Սյունյաց իշխանները, որոնք «Հայկից ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով բնիկ իշխանությամբ եկել-հասել էին մինչև այժմյան ժամանակները»*[63]*:*

Պարույր Սկայորդին, հավանաբար, եղել է սակ-սկյութների դաշնակցությամբ թագավորության կարգավիճակ նվաճած և մարաց թագավորից ճանաչված ու թագ ստացած Արամանյակյան ցեղամիավորման առաջին թագավորը, ինչը միայն միաճյուղ արքայատոհմ պատկերացնող հայ միջնադարյան պատմագրությունը ընկալել է ողջ Հայաստանի վերաբերյալ: Խորենացու ներկայացրած Պարույր Սկայորդով սկսվող արքայացանկը (Պարոյր, Հրաչեայ, Փառնաւազ, Պաճոյճ, Կոռնակ, Փառոս, Միւս Հայկակ, Երուանդ, Տիգրան),[64] *դա ըստ ամենայնի մ.թ.ա. VII–VI դդ. Հայաստանի հյուսիսում Ուրարտուին զուգահեռ իրենց առանձին թագավորությունը հիմնած Արամանյակյան ցեղամիավորման արքաների ցանկն է:*

Այսպիսով, առկա տվյալներն ու աղբյուրները բավականին լայն պատկերացում են տալիս ոչ միայն հայկական 3 ցեղատարածքային միավորումների, այլև գրանք գլխավորող արքայատների, գրանց փոխհարաբերությունների ու այլ մանրամասների մասին:

Անկախ ցեղային 3 արքայատների զուգահեռ գոյության, հայկական ցեղատարածքային միավորներից առնվազն 2 գլխավորները, մեծ մասամբ ընգգրկված են եղել մեկ միության մեջ: Արմենների ու խալդայների միջև կնքված Քսենոփոնի հիշատակած պայմանագրի և այլ տվյալների համաձայն, Երվանդ Սակավակյացի ու Տիգրանի գլխավորած Հայաստանը իրենից ներկայացրել է երկմիջուկ, բայց միասնական միավոր: Արտաշես I-ի թագավորումով հավանաբար վերացավ նաև այս երկմիջուկ փուլը: Այդպիսով միասնական Հայաստանի գահին, արմենական նախարարների համաձայնությամբ, նստում է Հայկ-Բիայնա միավորի արքայատան ներկայացուցիչը, որն իր մայրաքաղաքը հիմնում է ոչ թե իր տոհմի քաղաքական կենտրոն Վան-Տոսպում, այլ արմենական մայրաքաղաքային երկրամաս Այրարատում: Ըստ ամենայնի, համախմբման ու միավորման այսպիսի կարգի բարձրացած արտաշիսյան Հայաստանին է վերաբերել «ուստի և բոլորը միալեզու են» Ստրաբոնի հայտնի բնորոշումը[65]*: Նա «լեզու» տերմինը հաճախ օգտագործում է «ցեղ, ժողովուրդ, թագավորություն, պե-*

---

62 Խ ո ր ե ն ա ց ի, II, ԼԷ, էջ 190, 192:

63 Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Սյունիքի Պատմություն, ԾԵ, Երևան, 1986, էջ 257:

64 Խ ո ր ե ն ա ց ի, I, ԻԳ, էջ 80, 82:

65 Ս տ ր ա բ օ ն, XI, 14(5), c. 498. «Միալեզու» տերմինի վերաբերյալ տե՛ս Ս. Կ ր կ յ ա շ ա ր յ ա ն. Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմությունը. Երևան, 1970, էջ 90:

տություն» հասկացությունների փոխարեն: Այս լեզվամտածողությամբ Ստրաբոնի «միալեզու» բնորոշումը հավանաբար վերաբերել է ցեղատարածքային առումով «միացեղ-միաժողովուրդ-միաերկիր» դարձած Հայաստանին:

Չի կարելի ասել, որ Արտաշես I-ի գահակալության ժամանակներում հայ ժողովրդի ցեղային շրջանը լիովին ավարտվել է: Ցեղային 3 հիմնական միավորները թեև համախմբվեցին մեկ թագավորության մեջ, բայց Կորդուքը պահպանեց թագավորության կարգավիճակը: Բացի այդ, որոշ մանր ցեղեր, հատկապես բարձր լեռնային ծայրամասային շրջաններում, իրենց ցեղային առանձնահատկությունները ըստ ամենայնի պահպանել են երկար ժամանակ: Այսպես ենթադրելու ուղղակի հիմք է տալիս Պլուտարքոսը, որը խոսում է Տիգրան Մեծի ժամանակներում «Արաքսի ափերին բնակվող շատ ազատ ցեղերի» մասին[66]:

Այսպիսով, սույն քննությունից հետևում է, որ հայկական 3 ցեղատարածքային միավորներին գլխավորել են սեփական արքայական տները:

* * *

Հայագիտական տեսություններում գերակշռում է այն տեսակետը, որ հայ ժողովրդի կազմավորման գործընթացում առաջնային դեր են կատարել 2 կամ 3 էթնոտարրեր, ինչը բխում է 2 հիմնական՝ «հայ» և «արմեն» էթնանուններից, ինչպես նաև հայոց ծագումնաբանության տվյալներից: Բայց գրանցում հնդեվրոպական-հայկական ծագում է վերագրվում այդ էթնոտարրերից հիմնականում միայն մեկին, որն իր մեջ էր տարրալուծել մյուսներին: Այստեղ առաջադրված տեսակետի դեպքում նույնպես առաջանում է հայաստանյան 3 ցեղատարածքային միավորների էթնիկ պատկանելության հարցը: Այս առնչությամբ հին ժամանակագրական և դրանց համադրված միջնադարյան աղբյուրների տվյալներով կարելի է ասել հետևյալը:

Հին հունական աղբյուրներ

Քսենոփոնի երկերի համաձայն, ինչպես ասվեց, Հայկական լեռնաշխարհի առաջնային էթնոցեղային միավորումներն են արմենները, խալդայները և կարդուխները: Դրանց ցեղակցության մասին հույն պատմագիրը ուղղակիորեն չի խոսում, բայց մի դրվագում, ի տարբերություն խալդայների, նա արմեններին կոչում է «մյուս արմեններ»[67]: Այսինքն մի արմենները խալդայներն են, իսկ «մյուսը» հենց արմենները: Այդպիսով, նա խալդայներին նույնպես գիտում է որպես արմենական ցեղ: Այս 2 ցեղերի ազգակցությունն է հաստատում նաև նրանց միջև կնքված զինակցության, փոխադարձ հողօգտագործման ու ամուսնությունների պայմանագիրը[68]: Դա փաստորեն ցեղատարածքային միավորման համաձայնություն էր, ինչը դժվար թե հանդուրժեին օտար, տարբեր կրոնամշակութային արժեքներ ունեցող էթնոմիավորները:

---

66 Պ լ ո ւ տ ա ր ք ո ս. Զուգահեռ կենսագրություններ, Լուկուլլոս, XXVI.– ՀԺՊՔ, էջ 238:

67 Կյուրոպեդիա, III, 2 (18) էջ 112

68 Նույն տեղում, III, 2 (23); էջ 113:

Հին պարսկական աղբյուրներ

Բիհիսթունյան արձանագրությունում[69] Դարեհ I-ի (մ.թ.ա. 522–425 թթ) հայ զորավար Դադարշիշը պարսկերեն կոչված է «արմինիյա», իսկ մեկ այլ հայ՝ Բաբելոնի գահը գրված Արաքայի «արմինիյա» էթնանվանը հավելված է նաև «Հալդիտայի որդի» կոչումը: «Հալդիտա-Հալդ» անունը ծագեցվում է Ուրարտուի գերագույն աստծո «Խալդի» անունից[70]: Այսպիսով, հայ-արմինիյա էթնանունը ուղղակիորեն կապակցվում է Հալդիտա-Խալդ անվան հետ, ինչին կարելի է տալ հետևյալ մեկնաբանությունը:

Վերևում խոսվեց այն մասին, որ հնուց ավանդված ծագումնաբանական պատկերացումների համաձայն, ամեն մի ազգ սերվել է իր նախահորից, հետևաբար համարվել նրա սերունդը կամ որդիները: Հայերը նույնպես համարվել ու կոչվել են իրենց նախահայր Հայկի որդիներ կամ սերունդ: «Պայազատք Հայկայ», «Հայազամբք»[71] և նման կոչումները միջնադարում վերաբերել են էթնիկ ծագմանը, ինչին համապատասխանում է «Հայեր» նշանակող ժամանակակից «Հայորդիներ» ձևը: Նույն կարգով ամեն մի անհատ հայ համարվել է Հայկ նախահոր որդի: Այսպիսի օրինակ է Դարեհի արձանագրության «Անունն Արաքա, արմինիյա, Հալդիտայի որդի» հատվածին ուղղակիորեն համադրվող Կաղանկատվացու «Հըաչեայ, թագավոր Հայոց, որդի Հայկայ»[72] դարձվածքը: Երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է «արմինիյա»-հայ թագավորի և նրա էթնոպատկանելությանը[73]: Նրանցից Արաքան համարվում է «Հալդիտայի որդի», իսկ Հրաչյան՝ «որդի Հայկայ»: Ակնհայտ է, որ եթե Արաքան արմինիյա-հայ է, ապա պետք է համարվի Հայկի որդի: Բայց եթե նա կոչվել է ոչ թե Հայկի, այլ Հալդիտայի որդի, ապա դրանից հետևում է, որ Հալդիտա-Հալդը դա նույն Հայկն է:

Եթե Հալդիտան Արաքայի հայրն է, ապա այդպիսով նրա հոր անունն է առնչվում Հալդ-Խալդ աստծո անվան հետ, ինչը էականում ոչինչ չի փո-

---

69 Գ. Ն ա լ բ ա ն գ յ ա ն. Դարեհ Վշտասպի Իրիսթունյան արձանագրությունը. Երևան, 1964:

70 И. М. Д ь я к о н о в. Предыстория армянского народа, с. 235.

71 Ս ե բ ե ո ս, Ա, էջ 1, 3:

72 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, I, Գ, էջ 7:

73 Շատ հավանական է, որ Արաքան եղել է Ասորեստանի թագավոր Սենեքերիմի (Սինախերիբ) որդիների շառավիղը, որոնք մ.թ.ա. 681 թ. սպանելով իրենց հորը, փախել էին Արարատյան թագավորություն, ապաստան ու կալվածքներ ստանալով Աղձնիքում (АВИИУ 62, 63, Դ Թագաւորաց, ԺԹ 36-37, էջ 475, Խորենացի, I, ԻԳ, էջ 82, 84): Այս վարկածը հավանական է հատկապես այն տեսակետից, որ ազգային անկախության համար ապստամբած Բաբելոնի գահին գժվար թե հաջողվեր նստել ոչ թագավորական և օտար ծագմամբ անձնավորության: Եվ եթե Ասորեստանի ու Բաբելոնի կործանման հետ վերացել էին հին միջագետքյան արքայատոհմերը, ապա դրանց մի ճյուղը, հանձինս Սենեքերիմի որդիների, պահպանվել էր Հայաստանի հարավում: Այն մեկ ու կես հարյուրամյակի ընթացքում ըստ ամենայնի հայացել էր, ինչի հաստատում կարող է լինել Արաքային տրված «արմինիյա» էթնանունը: Բայց նրանց արքայական ծագումը այս ժամանակահատվածում չէր կարող մոռացված լիներ ոչ իրենց և ոչ էլ ապստամբած և իր գահի համար հին թագավորական տնից ծագող ժառանգորդ փնտրող Բաբելոնի կողմից: Հիշենք, որ նույնիսկ միջնադարում, Սենեքերիմի սպանությունից 1000 և ավելի տարիներ հետո, թե՛ հայ, թե՛ ասորի պատմագիրները շատ լավ էին հիշում, որ Սասունի նախարարությունը, Արծրունիներն ու Գնունիները ծագում են Սենեքերիմի որդիներից և ուղղակի կոչվում էին «զսերունդս Սենեքերիմայ» (Խ ո ր ե ն ա ց ի, I, ԻԳ, էջ 84: Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, I, Ա, էջ 14, 16, 34, 36, 60, 62, 74, 78, 82: Ա ն ա ն ո ւ ն Ե գ ե ս ա ց ի. Ժամանակագրություն, 457.– ՕԱՀՀՄ. հ. 12, Ասորական աղբյուրներ, Բ, Երևան, 1982, էջ 133):

խում, քանի որ միևնույն է, այդպիսով նույնպես ստացվում է հայ (արմինիյա)-Խալդ կապակցությունը, ինչից և հետևում է Խալդ-Հայկ նույնությունը: Բայց ներկայացված օրինակներից ակնհայտ է, որ «Հալդիտայի որդի» կոչումը էթնիկ ծագումն արտահայտող հնուց ընդունված սովորական ձև է, որին համապատասխանում են հայ միջնադարյան աղբյուրների «որդի Հայկայ», «Պայազատք Հայկայ», «Հայազամբք» և ուղղակիորեն էթնիկ ծագմանը վերաբերող նման համարժեքները:

Բիհիսթունյան եռալեզու արձանագրությունում արմեն-խալդ նույնացումը առկա է նաև այլ կերպ. հին պարսկերեն և էլամերեն տեքստերում Հայաստանին տրված «Արմինա», «Հարմինուա» անվանումներին աքքադերենում համապատասխանում է «Ուրաշտու» ձևը, իսկ «արմինիյա-հարմինույարա» էթնանվանը՝ «ուրաշթայա-ուրարտայա» համարժեքը:

Արաքան Բաբելոնի գահ է բարձրացել աքեմենյան գերիշխանության ժամանակ, մ.թ.ա. 521 թ.: Դա անմիջապես հաջորդում է մարական գերիշխանության ու Երեմիայի կոչի ժամանակներին (մ.թ.ա. 605–590 թթ.), երբ վկայվում է 3 բուն հայաստանյան ցեղային թագավորությունների գոյությունը: Այս զուգահեռում «արմինիյա, Հալդիտայի որդի» Արաքայի բուն երկրին ըստ ամենայնի համապատասխանում է Երեմիայի կոչի տարբերակների Հագեր (Հադ-Հալդ-Խալդ) թագավորությունը, իսկ ուղղակի «արմինիյա» Դադարշիշի բուն երկրին՝ Արմինա-Խուրմինեն: Սա հաշվի առնելով ենթադրելի է, որ Դարեհի դեմ ապստամբել է ոչ թե ողջ Հայաստանը, այլ միայն Վանա լճի ավազանը, կամ դրա արևելյան հատվածը ընդգրկող Հայկ-Խալդյան ցեղային միավորը, որին հավանաբար դաշնակցել են կորդվացի-կարդուխները: Սրա հաստատումն է այն, որ այս դեպքերից մեկ հարյուրամյակ հետո, Հայաստանով անցնող Քսենեփոնի համաձայն, հենց այս ցեղամիավորները՝ խալդայներն ու կարդուխներն էին, որ չէին հնազանդվում Աքեմենյան տիրապետությանը և պահպանում էին լիակատար անկախություն[74]: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ անկախ իր հավաստիացումներից, Դարեհը ոչ միայն չի կարողացել հաղթել Հայաստանի հարավում ապստամբածներին, այլ պարտություն է կրել նրանցից, ինչի հաստատումն է վերջիններիս պահպանած անկախությունը:

Ուրարտական աղբյուրներ

Ուրարտուի թագավոր Ռուսա III-ը (մ.թ.ա. VII դ. վերջ) ինքնակոչվել է «Էրիմենայի որդի» (Rusase Erimenahinise)[75]: *Այս դեպքում շատ ավելի վստահ կարելի է ասել, որ գործ ունենք էթնիկ նախահոր անունով տրվող, հնուց ընդունված սովորական էթնանվանաձևի հետ, քանի որ նախորդ օրինակում մեկ այլ «ուրարտայա» թագավորի՝ Արաքային «Էրիմենա» անվան «արմինիյա» անվանատարբերակը տրվում է ուղղակի որպես էթնանուն[76]: Այսպիսով, Խալդիի պաշտամունքի երկիր Ուրարտուի թագավորը և «Հալդիտայի որդի ուրարտայա» Արաքան առնչվում են նույն՝ «Էրիմենա-*

---

74 Անաբասիս, III, 5(16), IV, 3(4) V, (17), VII, 8(25), էջ 81, 89, 122, 197:

75 УКН, *69:*

76 «Էրիմենա» անունը Ռուսայի հայրանուն համարելով այդ անունով թագավորի գոյության ընդունումը (ՀԺՊ. հ. 1, էջ 335) արհեստական է, քանի որ չկա Էրիմենա անունը կրող թագավորի գոյությունը հաստատող որևէ վկայություն, առավել ևս այս անունով թագավորի թողած որևէ արձանագրություն:

արմինիյա-արմեն» էթնանվանը: Նույն մոտեցումն է Բիհիսթունյան տարեգրության պարսկերեն և աքքադերեն տարբերակներում «Արմինա-Ուրարտու», «արմինիյա-ուրարտայա» և Քսենոփոնի կողմից «արմեն-խալդայ» նույնացումների դեպքերում:

Հավանաբար ուրարտայա-արմինիյա-հայ թագավոր Արաքայի «Հալդիտայի որդի» և Ուրարտուի թագավոր Ռուսայի «Էրիմենայի որդի» կոչումները միջնադարում հայ ազգին Հայկ կամ Արամանյակ նախահայրերի որդիներ կամ սերունդ կոչելու «որդի Հայկայ», «ի զավակացն Հայկայ», «Պայազատք Հայկայ», «հայազամբք» կամ «յորգւոցն Արամենակայ», «որդիք աղգածնինն Արմենակայ» ձևերի՝՝ հին աղբյուրներում պահպանված նախնական էթնանվանաձևեր են:

Խալդ-ուրայնացիների հայ-արմենական էթնիկ պատկանելությունը առաջադրելիս, անմիջապես ծառանում է նրանց կողմից կիրառության մեջ մտած սեպագրերի լեզվի հարցը: Դեռևս վիճելի պատկանելություն ունեցող այս լեզվի առնչությամբ որոշակի կարելի է ասել, որ այն կիրառվել է հայախոս միջավայրում, ինչն ակնհայտ է ղդալի թիվ կազմող հայերեն փոխառություններից[78]: Դա ինքնին Հայկական լեռնաշխարհում հայախոս տարրի առկայության ամենածանրակշիռ փաստարկն է: Եթե նույնիսկ բացառենք ուրարտական սեպագրերի՝ վերջերս լրջորեն առաջադրվող հայերեն լինելու հավանականությունը[79], ապա դա սույն տեսությունը ժխտող լուրջ կռվան չի կարող հանդիսանալ: Ներկայացված տվյալների համաձայն, Հայկական լեռնաշխարհում նույն ցեղատարածքային կառույցը առկա է եղել թե՛ Ուրարտուի ժամանակ, թե՛ դրանից անմիջապես հետո և թե՛ հետագայում, առնվազն մինչև Արտաշիսյաններ: Մի ժողովրդից մյուսին կարող են փոխանցվել լեզվական, դիցաառասպելական տվյալներ, նույնիսկ էթնիկ անվանումներն ու բնակության սահմանները: Բայց անհնար է, որ որևէ ժողովրդի՝ բազում դարերի ընթացքում ձևավորված ցեղատարածքային բարդ կառույցը նույնությամբ անմիջապես ժառանգեր նրան փոխարինած մեկ այլ ժողովուրդ:

Առկա տվյալները որոշ պատկերացում են տալիս նաև հայկական երրորդ ցեղատարածքային միավորի՝ Կորգուք-Կադմեաց տան էթնոիրավիճակի պատմության վերաբերյալ: Հնադույն ժամանակագրական աղբյուրներում հիշվող կուտիների երկիրը տեղադրվում է Կորճայք-Կորդուքի շրջանում, ինչից ենթադրելի է, որ «կուտի» էթնանունը ծագում է «կուրտ-կորդ» ձևից: Կուտիները մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսերին նվաճել են Միջագետքը, որտեղ թագավորել են կուտիական 21 կամ 23 թագավորներ[80]: Ըստ ամենայնի, կուտիները դերիշխանություն են ունեցել ողջ Հայկական լեռնաշխարհում, ինչը հաստատում է ասորեստանյան աղբյուրներում երբեմն Ուրարտուին տրվող «Կուտիների երկիր» կամ «Կուտիում» անվանումները[81]: Ըստ ամենայնի, այս իրադարձությունների ար-

77 Խ ո ր ե ն ա ց ի, II, Է, Ը, էջ 124–130: Ս ե ր ե ո ս, Ա, Բ, Գ, էջ 1, 7, 9, 12: Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, I, Գ, էջ 4:

78 Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, էջ 427–445:

79 Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին.– ՊԲՀ, 2000, N 1:

80 Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն. Բարեպաշտ արքաների ..., էջ 7:

81 АВИИУ, 29, 37, 38, 49.

ձագանքը պահպանվել է արաբական միջնադարյան աղբյուրներում: Դրանցում Միջագեաքի նվաճողներ են համարվում ոչ թե կուտի-կորդվացիները, այլ հայերը: Նրանք պարտության են մատնել Շամիրամին հաջորդած որդուն՝ Արսիսին, որից հետո Ասորեստանի 20 թագավորներ «հարկ էին վճարում հայոց թագավորին»[82]: Կուտիներին հայերի հետ այս ուղղակի նույնացումը կարելի է համարել վաղ ժամանակների էթնոիրադրության հարմարեցում միջնադարյան իրավիճակին: Բայց նույն մոտեցումը առկա է շատ ավելի հին՝ մ.թ.ա. VII–VI դդ. աղբյուրներում: Խոսքը վերաբերում է Երեմիայի կոչի ներկայացված տարբերակներին, ինչպես նաև Ասորեստանի թագավոր Սենեքերիմին սպանած ու «Արարատ» երկրում ապաստան գտած նրա որդիներին վերաբերող հիշատակության բնագրային ու թարգմանական տարբերակներին, որոնցում «Արմինա-Արմենիա» կամ «Արարատ» էթնոերկրանուններին փոխարինում է քաղդեերեն «Կարդու» համարժեքը[13]: Այսինքն տվյալ դեպքերում «արմեն-կարդու» ուղղակի նույնացումը առկա է արդեն հին ժամանակագրական աղբյուրներում:

Հայկական լեռնաշխարհին ու Իրանական բարձրավանդակին սահմանակցող երկրամասերում տեղակայված Կորդվաց աշխարհի ավելի ուշ շրջանի էթնիկ իրավիճակի վերաբերյալ պատկերացում է տալիս Ստրաբոնը: Նրա համաձայն «Զագրոսը և Նպատը բռնված են այս ժողովուրդներով, և Պարսկաստանի Կիւրտիները (Κυρτιων) և Մարդերը (որոնք կոչվում են նաև Ամարդներ), ինչպես նաև Արմենիանիները (Αρμενια μεχρι), որոնք մինչև այժմ նույն անունով են կոչվում, նույն ցեղից են»[84]:

«Արմենիանիներ» անվանումից կարելի է միայն ենթադրել, որ այս ցեղը կարող է ունենալ հայկական ծագում: Այս առումով շատ ավելի որոշակի պատկերացում է տալիս ասորի պատմագիր Անանուն Եդեսացին (XII–XIII դդ.), որը նույն տարածաշրջանում «Կորդվաց անմատչելի լեռներում» VIII–IX դդ. բնակվողների ներկայի, անցյալի, դրանց էթնիկ պատկանելության վերաբերյալ հաղորդում է հետևյալը. «Այդ ժամանակ կային մարդիկ, որոնք կրոնով հեթանոս էին և պատկանում էին այսօրվա քրդերի ցեղին: Սկզբնապես նրանք տիրում էին որոշ բերդերի և, ինչպես գրված է այստեղ, իրենց առաջնորդի մահվանից հետո մահմեդական դավանանք էին ընդունել: Կազմված լինելով հեթանոս պարսիկներից ու հայերից՝ նրանք մի առանձնահատուկ ժողովուրդ էին հանդիսանում»: Նույն հեղինակի համաձայն, «կողոպուտի և ավարի նպատակով» այստեղ էին հավաքվում ներկայացուցիչներ «բոլոր ժողովուրդներից՝ պարսիկներից, արաբներից ու հեթանոսներից»[85]:

Եթե Եդեսացին հայերին համարում է Կորդուքի էթնոսներից մեկը, ապա ըստ Խորենացու «զկողմամբք Կորճէից» ընիկները ծագում էին «ի զարմից Հայկազանց», այսինքն հայեր էին, որոնց միացել էին որոշ եկվորներ[86]:

---

82 Ա. Ն. Տեր-Պետրոսյան. «Արա և Շամիրամ» առասպելի մի արձագանքը արաբ պատմիչ Մասուդիի մոտ.– ՊԲՀ, 1965, N4:
83 ՀԺՊՔ, էջ 116, ծանոթ. 5, էջ 117, ծանոթ. 2:
84 Страбон, XI, 7(1), 13(3), с. 481, 494:
85 Անանուն Եդեսացի, էջ 202–203:
86 Խորենացի, II, ԿԴ, էջ 238:

Ստրաբոնը մարդերին ու կուրտիներին համարում է «նույն ցեղից», իսկ հայ միջնադարյան աղբյուրները, որոնք այս երկրամասում ճանաչում են ոչ թե «մարդ», այլ «մար» կոչվող ցեղ, դրանց ուղղակի նույնացնում են քրդերի հետ. «բնակիչք յայն աշխարհքին որք են քուրդք, որք մարք կոչվին», կամ «աղդն մարաց, որ քիւրտ կոչի»: Դա ըստ ամենայնի բխում է արաբ պատմագիր Մասուդիի պահպանած քրդական ազդաբանությունից, ըստ որի քրդերի նախահայր Քուրդը մարերի նախահայր Մարի որդին է[87]: Դա միաժամանակ ենթադրում է իրանցիների հոսքը Կորդուք Մարաստանից, որոնք իրենց «մար» կամ «մարդ» ցեղանուններին զուգահեռ, տեղի աշխարհագրական անունով, ինչպես տեղացիները, կոչվել են նաև «կորդվացի-կորդ-կիւրտ-քուրդ»:

Հայկական 3 ցեղամիավորների էթնիկ պատկանելությունը ճշգրտելու հարցում առաջնային կարևորություն ունի այն հանգամանքը, որ Հայաստանին և հայ ժողովրդին տրված հիմնական էթնանուններն, ըստ ամենայնի, ծագում են այս ցեղամիավորումների անվանումներից: Իրենց և իրենց երկրին հայերի տված «հայ-Հայաստան» ինքնանվանումը, հավանաբար, պետք է առնչել Հայկ-Խալդյան ցեղատարածքային միավորման հետ: Այն, ըստ ամենայնի, արմատավորվել է Ուրարտուի ժամանակներում, երբ Հայկական լեռնաշխարհում իր գերիշխանությունն էր հաստատել Խալդ-Հայկ նախահայր-աստծուն պաշտող և իրենց նրա սերունդ համարող («Հալդիտայի որդի», «որդի Հայկայ», «պայազատք Հայկայ», «հայազամքք») ցեղամիավորումը:

Օտարների մեծամասնության կողմից հայերին ու Հայաստանին տրվող «արմեն-Արմենիա» անվանումն, ըստ ամենայնի, արմատավորվել է Երվանդունիների օրոք, երբ Հայաստանի մեծ մասը գտնվում էր Արամանյակյան ցեղամիավորման, այսինքն արմենների գերիշխանության ներքո: Այս էթնանվան միջազգային ճանաչումը հավանաբար պետք է առնչել արմենների դաշնակից մարա-պարսիկների հետ, որոնք իրենց ծավալուն նվաճումների հետ «արմեն» էթնանունը տարածել են ժամանակի ողջ աշխարհում:

Ինչպես Ուրարտուին ու ուրարտացիներին, այնպես էլ Հայաստանին և հայ ժողովրդին հին միջագետքցիների տված «Կուտիում, Կարդու, կուտիներ, կարդուներ» անվանումները, հավանաբար, ծագում են հայոց երրորդ ցեղամիավորմանը համապատասխանող Կագմոս-կորդվացիների անունից: Ինչպես Հայկ-խալդայների ու արմենների դեպքում, կորդվացիների էթնանունով հայ ժողովրդին ու Հայաստանը կոչելը կարող է լինել Հայկական լեռնաշխարհում այս ցեղամիավորման երբեմնի ձեռք բերած գերիշխանության արդյունք: Դա հավանաբար եղել է մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսերին, երբ, ինչպես ասվեց, Միջագետքից հյուսիս ընկած երկրների դաշնակցությունը գլխավորող կուտիները, որոնք աշխարհագրորեն նույնանում են կորդվացիների հետ, նվաճում են Միջագետքը:

Այս քննությունից հետևում է այն ենթադրությունը, որ Հայաստանին և հայ ժողովրդին տրված հիմնական «հայ, արմեն, կարդու» արմատներով անվանումները ծագում են տարբեր ժամանակներում Հայկական լեռնաշ-

87 Ն. Մ ա խ մ ո ւ ր յ ա ն. Քուրդ ժողովուրդը. Երևան, 1959, էջ 20–21:

խարհում գերիշխանության հասած 3 հիմնական ցեղամիավորումների անվանումներից: Ինչ վերաբերում է հայաստանյան 3 ցեղատարածքային միավորների էթնիկ պատկանելությանը, ապա ներկայացված տվյալները, կողմնակի կամ ուղղակի ձևով, վկայում են դրանց ցեղակցության և հայ էթնիկ պատկանելության օգտին:

* * *

Հայ ժողովրդի ցեղային կառուցվածքի բացահայտմամբ նշմարվում են հայոց նախնական պատմության ուրվագծերը: Հնարավոր է դառնում շատ ավելի խորությամբ հասկանալ ոչ միայն վաղ, այլև ավելի ուշ շրջանի պատմությունը, ինչպես նաև մեկնաբանել ու վերծանել մինչ այս չմեկնված, արժանի ուշադրության չարժանացած կամ ուղղակի անտեսված աղբյուրներն ու տվյալները: Առաջանում է հայ ժողովրդի նախնական շրջանի պատմությունը և նրա ողջ աղբյուրային բազան այլ տեսանկյուններով քննելու անհրաժեշտություն:

О ПЛЕМЕННОМ ПЕРИОДЕ ИСТОРИИ АРМЯНСКОГО НАРОДА

МУРАД ОГАНЯН

Резюме

Эпические первопредки, их сыновья, внуки, равно как и потомки в различных древних и средневековых генеалогических сказаниях в основном открыто воплощают племена и племенные союзы этих народов. Армянская генеалогия выстроена идентичным образом. Особенно хорошо отражены три племенных союза, которые засвидетельствованы в различных древних, хронологически достоверных документах (урартских, иудейских, халдейских, древнегреческих, малоазийских), так же как и в армянских и сирийских средневековых источниках. С выявлением трех армянских основных племенных союзов становится очевидным, что древнеармянские государства, Урарту и существовавшие до того государственные формирования Армянского нагорья, имели ту же самую, состоящую из 3-х ветвей территориально-племенную структуру, что и является веским доказательством того, что этническая обстановка упомянутого реґиона в данный исторический период особым изменениям не подвергалась. Одновременно выясняется, что каждым армянским племенным союзом правила своя царская династия. Эти династии существовали и властвовали в племенных владениях древней Армении часто паралелльно. Выясняется также то обстоятельство, что основные этнические названия армян (haj, armen, kardu), происходят от трех имен армянских племенных союзов. С помощью выявления племенной структуры армянского народа определяются основные контуры начальной эпохи истории Армении.

ABOUT THE TRIBAL PERIOD OF THE HISTORY OF THE ARMENIANS

MURAD OHANYAN

S u m m a r y

In various ancient and medieval genealogical traditions (legends), mythical ancestors, their sons and grandsons, and other generations often obviously embody the tribes and tribal groups of a given nation. There are three strongly represented Armenian tribes that are acknowledged in ancient chronological sources (Urartian, Hebraic, Haldic, Hellenic, Anatolian) as well as in Armenian and Assyrian medieval sources. Revelation of three Armenian tribal unions makes obvious that ancient Armenian states Urartu and other formations known in Armenian plateau, had the same tri-branch structure, which is the striking argument and proof of the fact that during that whole period the ethnic situation of the mentioned area didn't experience any changes. Meanwhile, it turned out that each tribal union had its own dynasty. These dynasties have often simultaneously ruled in tribal regions of ancient Armenia. Besides this, it appears that the main ethnic appellations for the Armenians (hay, armen, kardu) come from the names of three Armenian tribal unions. Revealing the structure of Armenian tribes, becomes obvious the outline of the initial historic period.